




ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պետականության
կայացումը դարերի
սահմանագծում



32 (47.925)
d-40

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պետականության կայացումը դարերի սահմանագծում

4636



ԹՅԻ

Երևան
«Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ

- 2009 -

ՀՏԴ 342: 32.001:323
ԳՄԴ 67.99(2)0+66+66.4
L 405

Խմբագրական կոլեգիա՝ Գ. Ավետիսյան, Մ. Աղաջանյան, Լ. Անդրիասյան, Ա. Ար-
շակյան, Զ. Արոյան, Գ. Բոյախյան, Ա. Եղիազարյան,
Վ. Սարգսյան, Գ. Իսազուլյան, Ա. Մելքոնյան, Ս. Մի-
նասյան, Ն. Փանոսյան, Ռ. Սաֆրաստյան

L 405 ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. Պետականության կայա-
ցունը դարերի սահմանագծում, Քաղաքական հետազոտությունների
ինստիտուտ, 2009. - 72 էջ:

ԳՄԴ 67.99(2)0+66+66.4

Աշխատությունը ընդգրկում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետակա-
նության կառուցման քաղաքական և իրավական ասպեկտների համալիր վերլուծությունը:
Ներկայացված են Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում պետության կառուցման
անցած փուլերը, Հանրապետության հայ ժողովրդի պայքարը անկախության և անվտանգ
կենսագործունեության համար, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գոր-
ծընթացի հիմնական փուլերը և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետականու-
թյան ժամանակակից հիմքերը: Աշխատությունը նախատեսված է փորձագետների, ինչպես
նաև միջազգային կառույցների ու տարբեր պետությունների պաշտոնատար անձանց հա-
մար, որոնք ընդգրկված են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթա-
ցի մեջ: Այն կարող է օգտակար ծեռնարկ հանդիսանալ նաև Ղարաբաղյան հակամար-
տության խնդիրներով հետաքրքրվող քաղաքական գործիչների համար: Աշխատությունը
հասցեագրված է նաև ամենալայն ընթերցողին: Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
պետականության կայացման ուղիների ու արդի վիճակի իրական ընկալման համար:

ISBN 978-99941-965-2-5

© Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2009 թ.

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պետականության կայացումը դարերի սահմանագծում

Ընդհանուր տվյալներ

Պետության լրիվ անվանումը՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետու-
թյուն:

Պետության համարժեք անվանումը՝ Արցախի Հանրապետություն:

Տարածքը՝ 11458 ք.կմ:

Մայրաքաղաքը՝ Ստեփանակերտ (քաղաքի բնակչությունը կազմում է
50 405 մարդ):

Վարչատարածքային բաժանումը՝ 7 շրջաններ և Հանրապետության
մայրաքաղաքը, 10 քաղաքներ և 301 գյուղական բնակավայրեր:

*Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրու-
թի, Սարդակերտի, Մարտունու, Շուշիի շրջանները նախկի-
նում գտնվել են ԼՂԻՄ-ի կազմում, Մարդակերտի և Մարտու-
նու շրջանների մի մասը զավթված են Ադրբեջանի Հանրապե-
տության կողմից: Հանրապետության Շահումյանի ամբողջ
շրջանը 1992 թվականի ամռանից բռնազավթված է Ադրբեջա-
նի Հանրապետության կողմից: 1993 թվականի դեկտեմբերին
Լաչինի շրջանում ձևավորվել է Լեոնային Ղարաբաղի Հան-
րապետության Քաշաթաղի շրջանը՝ Բերձոր շրջկենտրոնով
(նախկին Լաչինը): Համաձայն Լեոնային Ղարաբաղի Հանրա-
պետության Սահմանադրության 142-րդ հոդվածի. «Մինչև
Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական տա-
րածքի վերականգնումը և սահմանների հստակեցումը, հան-
րային իշխանությունն իրականացվում է Լեոնային Ղարաբա-
ղի Հանրապետության փաստացի իրավասության տակ
գտնվող տարածքում»:*

Բնակչությունը՝ 137 737 մարդ (համաձայն 2005 թվականի մարդահա-
մարի):

Կառավարման տեսակը՝ նախագահական հանրապետություն:

Պատմությունը

Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ Արցախ) պատմականորեն հայկական հնագույն երկրամաս է, որը տեղակայված է Հայկական սարահարթի հյուսիս-արևելքում: Այն զբաղեցնում է Փոքր Կովկասի լեռնային համակարգի բարձրավանդակի ու նախալեռնային շրջանները՝ հյուսիս-արևմուտքից արեղնածև ձգվելով Ասանա լճի արևելյան ափամերձ սարերից դեպի հարավ-արևելք՝ մինչև Արաքս գետը, որտեղից անցնում է Իրանի սահմանը:

Լեռնային Ղարաբաղի տարածքը իր պատմական ու աշխարհագրական ամբողջության մեջ կազմում է շուրջ 12 հազար քառակուսի կիլոմետր:

Հնագույն հեղինակները նշում էին Հայաստանին Արցախի պատկանելության մասին՝ մատնանշելով, որ Քուռի աջափնյա գավառը կազմում է Հայաստանի մասը: Ստրաբոնը, Պլինիոս Ավագի, Կլավդիոս Պտղոմեոսի, Պլուտարքոսի, Դիոնա Կասիոսի և այլ հեղինակների աշխատություններում նշվում է, որ Քուռով անցնում էր Հայաստանի սահմանը հնագույն պետություն Ալեանիայի (Աղվանքի) հետ, որն իրենից ներկայացնում էր կովկասյան լեռնային բազմալեզու ցեղերի կոնգլոմերատ: Այն ավելի ուշ անհետացավ աշխարհի քարտեզից: Ալեանիա Աղվանքը ձևավորող ցեղերի հետնորդները համարվում են լեզգիները, ավարները, ուզիները և այլ ժողովուրդներ:

Ուրարտու պետության մեջ (Վանի Թագավորություն, IX-VI դարեր մ.թ.ա.) Արցախը հիշատակվում է Ուրտեխե-Ուրտեխիհի անվան տակ (այլ անվանումն է՝ Ուրգախի):

Այն բանից հետո, երբ 301 թվականին Հայաստանը քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն, Արցախը, ինչպես և Հայաստանի այլ շրջաններ, մշակույթի նոր հզոր վերելք վերապրեցին, որը պայմանավորված էր 405 թվականին սեփական գրերի ստեղծմամբ ու դրա տարածմամբ: Հատկանշական է, որ հայոց այբուբենի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցը առաջին հայկական դպրոցը բացել է 5-րդ դարի սկզբին, հենց Արցախում՝ Ամարաս եկեղեցում:

Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը հարյուրամյակներ շարունակ ողբերգական է եղել, քանի որ արևելքից դեպի արևմուտք ճանապարհին ընկած այս երկամասը հաճախ դառնում էր տարբեր զավթիչների արշավանքների բեմահարթակ. արաբները, պարսիկները, թուրք-սելջուկները, մոնղոլները, թուրքական նոր քոչվոր ցեղերը դարեր շարունակ

նակ ձգտում էին հնագանդեցնել այս հայկական երկրամասը, որը անձնագոհաբար պաշտպանում էր կյանքի ու ինքնության իր իրավունքը, ինչը մինչ օրս հանդիսանում է Արցախի ժողովրդի ճակատագիրը: Հայ քրիստոնեական մշակույթի բազմաթիվ կորոզները երկարատև գոյության այդ պայքարի վկայություններն են:

Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև (387 թ.) հանգեցրեց Արևելյան Անդրկովկասի տարածքի (ներառյալ Արցախը) օտարմանը Պարսկաստանին, որը սակայն մինչև ուշ միջնադար չկարողացավ զորեցություն ունենալ Արածաշրջանի ազգային սահմանների վրա. Քուռի աջափնյա շրջանը, տարածքի հետ միասին, մնաց հայաբնակ: Եվ միայն 18-րդ դարի կեսերին սկսվեց թուրք քոչվոր ցեղերի ներթափանցումը Ղարաբաղի հյուսիսային շրջաններ, ինչը տևական պատերազմների սկիզբ դարձավ հայկական իշխանությունների հետ: Լեռնային Ղարաբաղի մեկիթությունները (իշխանությունները), որոնք կառավարվում էին կալվածքային ժառանգորդ իշխանների՝ մեկիթների կողմից, կարողացան պահպանել փաստացի ինքնավարությունը, ներառյալ սեփական իշխանական գորագնդերը:

Հետագա հինգ տասնամյակները այս լեռնային եկիրը նետեցին արյունալի երկպառակտիչ պատերազմների հորձանուտը, որոնք ուղեկցվում էին ավերածություններով, քաղցով, բնակչության զանգվածային արտահոսքով ու այլ աղետներով:

19-րդ դարի սկզբին Արցախի իշխանությունները, որոնք ձևավորվում էին միավորված էին Ղարաբաղյան խանության մեջ, մտան Ռուսական Կայսրության կազմ:

1813 թվականին Պոլիստան գյուղի մերձակայքում (ներկայիս ԼՂՀ-ի Շահումյանի շրջան) ստորագրվեց Գյուլիստանի խաղաղ պայմանագիրը՝ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, համաձայն որի Լեռնային Ղարաբաղը, ինչպես և Անդրկովկասի մի շարք այլ տարածքներ, Պարսկաստանից «հավերժորեն» անցան Ռուսաստանին: Օսմանյան թուրքերի, պարսիկների և թուրք քոչվոր ցեղերի հետ հարյուրամյակներ վարած պատերազմներից հետո երկրամասի պատմության մեջ սկսվեց խաղաղ ժամանակաշրջանը, որն ընդհանուր առմամբ շարունակվեց մինչև 1917 թվականը:

Առաջին աշխարհամարտի սկզբից ի վեր և Ռուսաստանում 1917 թվականի հեղափոխությունից հետո Լեռնային Ղարաբաղի համար դժվարին ժամանակաշրջան սկսվեց, որը ողբերգական անդադարձ ու-

նեցավ ամբողջ երկրամասի ճակատագրի վրա: Դեռ 1918 թվականը դարձավ Ղարաբաղյան Հակամարտության պատմության ելակետը, որի նոր փուլը բռնկվեց 1988 թվականին՝ խորհրդային ռեժիմի փլուզման նախօրյակին:

1918 թվականին, Անդրկովկաս կատարված թուրքական ներխուժման շնորհիվ, ստեղծվեց թուրքամետ, խամաճիկային, նախկինում գոյություն չունեցող «Ադրբեջան» պետությունը, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի, Վրաստանի և Իրանի տարածքների մի մասի վրա:

1918 թվականի հուլիսի 22-ին, Շուշիում հրավիրվեց Ղարաբաղյան հայերի Առաջին համագումարը, որը Լեռնային Ղարաբաղը իռչակեց որպես ազատ վարչա-քաղաքական միավոր, ընտրեց Ազգային խորհուրդ և ժողովրդական կառավարություն, որը 1918 թվականի հուլիսի 24-ին Ջեչակագիր ընդունեց: Այստեղ շարադրված էին նոր իշխանությունների առջև կանգնած խնդիրները: Համագումարից հետո, ադրբեջանական կառավարությունը՝ հենվելով թուրքական զենքի վրա, փորձեց ուժով Լեռնային Ղարաբաղը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ: Թուրքական բանակի հրամանատարությունը Ղարաբաղի Ազգային խորհրդին վերջնագիր ներկայացրեց, սակայն 1918 թվականի սեպտեմբերի 6-ին հրավիրված Ղարաբաղյան հայերի երկրորդ համագումարը կրկին մերժեց թուրքական հրամանատարության և ադրբեջանական կառավարության պահանջները:

1918 թվականից սկսած Լեռնային Ղարաբաղի իր ժողովրդի նկատմամբ վրածած ադրբեջանական իշխանությունների քաղաքականությունը համոզիչաբար և եր այլ էքսպանսիոնիստական ծրագրի բաղկացուցիչ մասը, որն իրականացնում էր Թուրքիայի օսմանյան կառավարությունը և նրա հետմորդները՝ երիտթուրքական ու քեմալիստական իշխանությունները, որն ուղղված էր ամբողջ հայկական բնակչության բնաջնջմանը ոչ միայն Թուրքիայի իշխանության տակ կատարված Արևմտյան Հայաստանում, այլ նաև Արևելյան Հայաստանի զավթված շրջաններում: Կարսի շրջանում, Նախիջևանում, Շիրակում, Չանգեզուրում և Ղարաբաղում: Դրանով իսկ, 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունը, որը ճանաչված է բազմաթիվ երկրների ու ժամանակակից միջազգային կառույցների կողմից, շոշափում է պատմականորեն հայության կողմից բնակեցված նաև այդ տարածքները: Հայոց ցեղասպանությունն իրականացվել է նաև Արևելյան Անդրկովկասի այլ հատվածներում՝ հայերի պարփակ բնակեցման տարածքներում, որտեղ նրանք

որոշիչ մասնակցություն են ունեցել այդ տարածքների կառուցման ու բարգավաճման գործում: Այսպես օրինակ, 1918 թվականի սեպտեմբերին, միայն երեք օրերի ընթացքում, թուրքական զորքերի կողմից Բաբուն գրավելուց հետո, քաղաքում սպանվել է ավելի քան 30 հազար հայ:

Պատերազմի դադարեցման նպատակով, Հայաստանը համաձայնվել է ճանաչել Լեռնային Ղարաբաղի վիճարկելի կարգավիճակը և տարածքային վեճերի լուծումը փոխանցել միջազգային հանրությանը՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքը: Լեռնային Ղարաբաղի վիճելի կարգավիճակը անմիջականորեն ճանաչվել է նաև Ադրբեջանի, Ռուսաստանի, Փարիզի խաղաղության կոնֆերանսի, Ազգերի Լիգայի կողմից:

Ադրբեջանական ժողովրդավարական Հանրապետություն (ԱԺՀ) կողմից պետության տարածքային հավակնությունները գլխավոր պատճառ հանդիսացան համաշխարհային հանրության կողմից տվյալ պետական գոյացության չճանաչման ու Ազգերի Լիգայի շարքերում ԱԺՀ-ն չընդգրկելու համար:

1920 թվականի դեկտեմբերի 1-ին, իր երրորդ ենթակոմիտեի գեկույցի հիման վրա, Ազգերի Լիգայի Հինգերորդ կոմիտեն՝ արձագանքելով Ադրբեջանի տարածքային պահանջներին ու հակահայկական զանգվածային ջարդերին, միաձայն դեմ արտահայտվեց ԱԺՀ-ի Ազգերի Լիգային անդամակցությանը: Նույն ժամանակ Ազգերի Լիգան, մինչև հակամարտության վերջնական կարգավորումը, Լեռնային Ղարաբաղը ճանաչեց որպես վիճելի տարածք, որի հետ համաձայնվեցին հակամարտության մեջ ընդգրկված բոլոր կողմերը, այդ թվում նաև Ադրբեջանը: Այսպիսով, 1918-1920 թթ ԱԺՀ-ի ձևավորման շրջանում նրա սուվերենությունը չէր տարածվում Լեռնային Ղարաբաղի վրա (ինչպես նաև Նախիջևանի վրա):

1920 թ. դեկտեմբերին, նորաստեղծ խորհրդային Ադրբեջանի իշխանությունները իռչակեցին իրենց հրաժարումը վիճելի տարածքներից և ճանաչեցին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի «ազատ և լիարժեք ինքնորոշման» իրավունքը

խորհրդային Ադրբեջանի կողմից վիճելի տարածքների նկատմամբ հավակնություններից հրաժարվելու և Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների միջև համաձայնագրի հիման վրա 1921 թ. հունիսին Հայկական ԽՍՀ-ն Լեռնային Ղարաբաղը հայտարարեց որ-

պես իր անքակտելի մաս: Այդպիսով տեղի ունեցավ ցեխայի ակտը, որը միջազգային-իրավական առումով դարձավ Լեռնային Ղարաբաղի առնչությամբ վերջին օրինական ակտը՝ Անդրկովկասում կոմունիստական ռեժիմի ժամանակաշրջանում:

Տեխայի ակտը ողջունեցին ինչպես միջազգային հանրությունը, այնպես էլ Ռուսաստանը, ինչը ամրագրված է Ազգերի Լիգայի Ասամբլեայի որոշման մեջ (18 դեկտեմբերի, 1920 թ.), Ազգերի Լիգայի Գլխավոր քարտուղարի կողմից Ազգերի Լիգայի անդամ երկրներին ուղղված տեղեկանք-Մոտայում (4 մարտը 1921 թ.) և Ռուսաստանի խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Զանապետության (ՌԽՖՍՀ) Ժողովրդական կոմիսարիատի կողմից իշխանության բարձրագույն մարմնին՝ Սովետների 11-րդ համագումարին ներկայացված 1920-1921 թթ. տարեկան հաշվետվության մեջ:

Լեռնային Ղարաբաղի և նրա ժողովրդի նկատմամբ կատարված մի ամբողջ շարք մանիպուլյացիաներից հետո, 1921 թ. հուլիսի 5-ին, բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Կովկասյան բյուրոյի (ՌԿԿ/բ) ԿԿ-ի Կավբյուրո) անիրավ որոշմամբ՝ Լեռնային Ղարաբաղը «Շուշի մայրաքաղաքով և ինքնավարության լայն իրավունքներով» ընդգրկվեց նորաստեղծ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում: 1923 թ. մարզի տարածքի մի մասում ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼԻՄ):

Ինքնավարության անվանումն ինքնին վկայում է այն, որ ինքնավարությունը ստեղծվել է մարզի տարածքի միայն մի հատվածում:

Ընդ որում, մարզի սահմաններն ամցկացվել են այնպես, որ ինքնավարության շրջանակներից դուրս մնան հայաբնակ մի շարք շրջաններ, որոնք կազմում են Ղարաբաղի անբաժանելի մասը (Լաչինի, Քելբաջարի, Շահումյանի շրջանները և Խանլարի, Ֆիզուլու, Աղզամի, Դաշքեսանի, Գեղաբեքի, Բերդինի, Ջերբախի, Կուբատլուի և Ադրբեջանական ԽՍՀ-ի այլ շրջանների կազմի մեջ ընդգրկված զգալի տարածքներ):

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղը բաժան-բաժան արվեց. մի մասում ձևավորվեց տարածքային ու ֆունկցիոնալ սահմանափակ ինքնավարություն, իսկ մնացած մասը տարրալուծվեց խորհրդային Ադրբեջանի վարչական շրջանների մեջ, ընդ որում այնպես, որպեսզի վերացվի ֆիզիկական ու աշխարհագրական կապը Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միջև: Իր պետականաստեղծ միջուկից՝ ի դեմս Հայաստանի,

պատմականորեն հայկական տարածքների օտարումը դրանով չավարտվեց: 1921 թվականին կնքված Կարսի և Մոսկվայի պայմանագրերը հանգեցրեցին Կարսի շրջանի ու Նախիջևանի օտարմանը՝ համապատասխանաբար հօգուտ Թուրքիայի և Ադրբեջանի (Նախիջևանը վերածվեց Ադրբեջանի պրոտեկտորատի տակ գտնվող ինքնավար տարածքի):

Ինքնավար կարգավիճակով խորհրդային Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի ընդգրկումը օրինակաճանաչեց բուն հայկական տարածքների բռնազավթումը: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության քաղաքացիական, քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունքները սկսեցին ենթարկվել լայնածավալ խտրականության: Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների այդ նպատակաուղղված խտրական քաղաքականությունը հանգեցրեցին նրան, որ խորհրդային իշխանության տարիներին և ընդհուպ մինչև Ղարաբաղյան շարժման ժամանակակից փուլի սկիզբը (1988 թ.), մարզի հայկական բնակչությունը ոչ միայն չաճեց, այլ նույնիսկ նվազեց ինչպես քանակային առումով, այնպես էլ տոկոսային արտահայտությամբ: Այսպես, եթե 1921 թ. հայերը ընդհանուր առմամբ կազմում էին Լեռնային Ղարաբաղի բնակչության 96 տոկոսը, ապա 1979 թ. բոլշևիկների կողմից երկրամասի մի հատվածում հռչակված ԼԻՄ-ում նրանք կազմում էին ամբողջ բնակչության միայն 75 տոկոսը: Իսկ ադրբեջանական բնակչությունը հակառակ, մի քանի անգամ ավելացավ, և այդ աճը շարունակվեց Ադրբեջանի այլ տարածքներից վերաբնակեցվածների հաշվին: Եթե 1923 թ. ադրբեջանցիները կազմում էին մարզի բնակչության ընդամենը 3 տոկոսը, ապա 1959 թ.: 13 տոկոսը, իսկ 1988 թ. 24 տոկոսը:

Նույնիսկ խորհրդային տոտալիտար կարգերի պայմաններում Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը չէր հրաժարվում պատմական արդարությունը վերականգնելու իր մտադրություններից և Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից մարզը դուրս բերելու ձգտումներից, դրանում տեսնելով իր անվտանգ ապագայի միակ երաշխիքը: ԽՍՀ-ի կենտրոնական մարմինների առջև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բարձրացման փորձեր բազմիցս են ձեռնարկվել: 1965 թ. Ղարաբաղցի հայերի մի խումբ անամկով դիմեց ՍՄԿԿ ԿԿ-ին՝ ԼԻՄ-ի տնտեսական ու մշակութային զարգացման բեռությունների մասին ու Հայկական ԽՍՀ-ին կան ՌԽՖՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերամիավորման պահանջով: Դիմումի տակ ստոգրել էին 45 հազար ղարաբաղցիներ: 1966 թ. Հայկական

ԽՍՀ-ի Կոմկուսի ԿԿ-ը Հայկական ԽՍՀ-ին ԼՂԻՄ-ի վերամիավորման հարցով դիմեց ՍՄԿԿ ԿԿ-ին: Նույն թվականին ՍՄԿԿ ԿԿ-ի Քարտուղարությունը համոզմունքներով Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ-ի Կոմկուսի ԿԿ-ին համատեղ նախապատրաստել Լեռնային Ղարաբաղի հարցը: Հայկական ԽՍՀ-ի Կոմկուսի ԿԿ-ի և Ադրբեջանական ԽՍՀ-ի Կոմկուսի ԿԿ-ի առաջին քարտուղարների գլխավորությամբ ստեղծվեցին հանրապետական համանաժողովներ:

1967 թ. հուլիսին, Լեռնային Ղարաբաղում ժողովրդական հուզումներ տեղի ունեցան՝ կապված Բերդուհի ԿԿ-ի գյուղի հայ բնակիչ փոքրիկ տղայի սպանության հետ, որն իրագործել էր հարևան գյուղի ազգությամբ ադրբեջանցի դպրոցի տնօրենը: Ադրբեջանական ԽՍՀ-ի կուսակցական իշխանությունների սադրիչ գործողությունները, որոնք ուղղված էին Լեռնային Ղարաբաղի խնդրի ազգամիջյան խնդրի սրմանը, այս ճշացող միջադեպից հետո հանգեցրին ԼՂԻՄ-ի բնակչության զանգվածային բողոքների: Հայ երեխայի սպանության հետ կապված ժողովրդական ընդվզման ճնշման ընթացքում գնդակահարվեցին ու բանտերում ոչնչացվեցին շուրջ 20 հայեր, մոտ 10-ը անհետացան, ավելի քան 150-ը ենթարկվեցին ճնշամիջոցների, և շուրջ երկու տարի տևած հետապնդումների արդյունքում Լեռնային Ղարաբաղից ստիպված եղավ հեռանալ ավելի քան 100 ընտանիք:

Լեռնային Ղարաբաղի հարցը բարձրացվել է նաև նախորդ դարի 70-ական թվականներին: Այսպես, 1977 թ. Ույեմբերի 23-ին ԼՂԻՄ-ի հարցը քննարկման առարկա դարձավ ԽՍՀ-ի Մինիստրների խորհրդի Նախագահության նիստում՝ կապված ԽՍՀՄ Նոր Սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկման արդյունքների ամփոփման հետ: Այդ նիստի արդյունքում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի Նախագահությունը արձանագրել է հետևյալը. «Մի շարք պատմական հանգամանքների հետևանքով մի քանի տասնամյակ առաջ Լեռնային Ղարաբաղը արհեստականորեն միացվել է Ադրբեջանին: Ընդ որում հաշվի չեն առնվել մարդիկ պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի կամքը ու տնտեսական շահերը: Անցել են տասնամյակներ, իսկ Ղարաբաղի հարցը շարունակվում է հղիվել ու անհամապատասխան առաջացել... Անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ Արցախը) վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին: Այդ դեպքում ամեն ինչ կընկնի իր օրինական տեղը»:

Ղարաբաղյան շարժման ժամանակակից փուլի սկիզբը

Ղարաբաղյան շարժման ժամանակակից փուլը սկսվել է յուրահատուկ հանրաքվեով 1987 թվականի երկրորդ կեսին. բնակչության զանգվածային հարցման արդյունքում Հայկական ԽՍՀ-ին վերամիավորման աջակցության դիմումի տակ ստորագրեցին ավելի քան 80 հազար ղարաբաղցի հայեր: Հենց այս հանրաքվեն հիմք հանդիսացավ այն բանի, որ 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում կայացրեց, որը խմբաբան էր պարունակում Ադրբեջանական ԽՍՀ-ի Գերագույն խորհրդին իր կազմից դուրս գալու, Հայկական ԽՍՀ-ի Գերագույն խորհրդին՝ իր կազմի մեջ ընդգրկելու, և ԽՍՀ-ի Գերագույն խորհրդին այս խնդրանքը բավարարելու մասին:

Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից սահմանադրական ճանապարհով իր կամքի արտահայտմանն ի պատասխան Ադրբեջանական ԽՍՀ-ի ամբողջ տարածքում Սոււմգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Շամիտրում, Մինգչաուրում, այլ շրջաններում սկսվեցին հայերի ջարդեր, զանգվածային սպանություններ, ցեղասպանության բնույթի գործողություններ, որոնց արդյունքում հարյուր հազարավոր հայեր սպանվեցին և վիրավորվեցին:

1988 թ. փետրվարին տեղի ունեցած եռօրյա զանգվածային ջարդերի ընթացքում առաջին գոհերը դարձան Սոււմգայիթի հայերը, որոնցից շուրջ հարյուրը գազամաքար հոշուկվեցին, իսկ մնացածը վտարվեցին: Նույն տարվա ամռան-աշնան ամիսներին հարյուր հազարավոր հայեր լքեցին Բաքուն: 1988 թ. աշնանը լայնածավալ ջարդերի ու ազգային գտումների հետևանքով վտարվեցին Լեռնային Ղարաբաղի հյուսիսային հատվածի, Ադրբեջանական ԽՍՀ-ի գյուղական շրջաններում և Բաքվում բնակվող հայերի մեծամասնությունը: 1990 թ. հունվարին, Բաքվում հայերի ցեղասպանության իրականացման ընթացքում, երբ դաժանաբար սպանվեցին ավելի քան 200 մարդ, քաղաքը լքեց մնացած հայկական բնակչությունը:

Ավելի քան 400 հազար հայեր վտարվեցին Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի քաղաքներից ու գյուղերից: Վերջինիս հյուսիսային հատվածից վտարվեցին պարփակ բնակեցման շուրջ 50 հայկական բնակավայրերի, ինչպես նաև Գյանջա քաղաքի բնակիչները, որում հայերի քանակն ավելին էր, քան ամբողջ ԼՂԻՄ-ի ադրբեջանական բնակչությունը:

1989 թ. հունվարի 12-ին, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը քննարկեց Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի մասին հարցը և նպատակահարմար գտավ ԼՂԻՄ-ում ժամանակավորապես մտցնել կառավարման հատուկ ձև՝ պահպանելով Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կարգավիճակը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմին: Նույն օրը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը հրամանագրով ստեղծվեց ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն:

Կառավարման նման ձևի ներդրումն ուղղված էր Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ոչ քաղաքական լուծմանը: Ժողովրդավարական ճանապարհով ընտրված իշխանության մարմինների գործունեությունը կասեցվեց, իսկ արտակարգ դրության ռեժիմի իրականացման համար ներգրավվեցին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) ներքին զորքերի ստորաբաժանումները:

Չատուկ կառավարման կոմիտեն գոյատևեց տասը ամիս և 1989 թ. նոյեմբերին ադրբեջանական իշխանությունների ճնշման տակ լուծարվեց, իսկ նրա իրավասությունները փոխանցվեցին Ադրբեջանական ԽՍՀ-ի ԼՂԻՄ-ի հարցերով կազմակերպական կոմիտեին: ԽՍՀՄ ՆԳՆ-ի և խորհրդային բանակի աջակցությամբ, կազմավորվեցին պատժիչ զործողություններ էր մշակվում և իրականացնում ոչ միայն Լեռնային Ղարաբաղից, այլև նրան հարակից Ադրբեջանական ԽՍՀ-ի այլ հայաբնակ շրջաններից հայկական բնակչության բռնի տեղահանման ուղղությամբ:

Սեփական պատժիչ նպատակների համար օգտվելով խորհրդային բանակի ստորաբաժանումներից, Մոսկվայի լուռ համաձայնությամբ, Ադրբեջանը 1991 թվականի ապրիլ-օգոստոս ամիսներին ԽՍՀՄ-ի ներքին զորքերի, խորհրդային բանակի ստորաբաժանումների և հանրապետական ՆԳՆ-ի ուժերով սկսեց Լեռնային Ղարաբաղից հայերի տեղահանման գործողությունները: Այդ օպերացիայի ընթացքում, որը ստացել էր «Կոլտո» (Օղակ) անվանումը, տեղահանվեց Լեռնային Ղարաբաղի Խանլարի, Շահումյանի, Շուշիի և Չաղդուբի շրջանների 24 գյուղերի բնակչությունը: Չարյուրավոր մարդիկ սպանվեցին ու վիրավորվեցին, հազարները թալանվեցին և քշվեցին իրենց տներից:

ԽՍՀՄ-ում 1991 թվականի օգոստոսյան հեղաշրջման (պուտչի) ծախսողովից հետո իրավիճակը Լեռնային Ղարաբաղում սկսեց փոխվել: Խորհրդային բանակն ու ներքին զորքերը աստիճանաբար դադար

րենցին մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի միջև հակամարտությանը՝ հօգուտ վերջինիս:

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզման պահը, Ղարաբաղյան Չակամարտության շուրջ ստեղծված իրավիճակի և 1991-1994 թթ. հակամարտության գոտու մարտական գործողությունների կապակցությամբ, արտասահմանյան պետությունների ու եվրոպական կառույցների կողմից արված զննհատականները կառուցվում էին հետևյալ սկզբունքային մոտեցումների վրա:

Այսպես, 1989 թ. ԱՄՆ Սենատը որոշում կայացրեց, որը դատապարտում էր Լեռնային Ղարաբաղի և Չայաստանի հայկական բնակչության նկատմամբ խորհրդային Միության դեկավարության և խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող խտրականություն և զանգվածային բռնությունների քաղաքականությունը:

1989 թ. հուլիսի 19-ին ԱՄՆ Սենատի Արտաքին գործերի կոմիտեն որոշում ընդունեց «Լեռնային Ղարաբաղի շուրջ վեճի խաղաղ կարգավորմանը աջակցելու մասին»: Որոշման մեջ ձևակերպված էր «Չայաստանի հետ վերամիավորման պահանջը Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների, ինչպես նաև ժողովրդավարական շարժման ներկայացուցիչների (ներառյալ վերջերս ազատ արձակված «Ղարաբաղ» կոմիտեի անդամները) հետ քննարկելու ԽՍՀՄ նախագահին ուղղված» կոչը:

1989 թ. նոյեմբերի 19-ին ԱՄՆ Սենատը Լեռնային Ղարաբաղի շուրջ որոշում ընդունեց, որում մասնավորապես նշվում էր. «Չաչվի առնելով այն, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում բնակվող 80 տոկոսանոց հայկական մեծամասնությունը անհանգստություն է հայտնում, հաշվի առնելով այն, որ 1988 թ. փետրվարի 28-29-ին Ադրբեջանի Սոււձայիթ քաղաքում կատարված հայերի սպանությունները խորհրդային կառավարությունը բնորոշել է որպես ջարդեր, հաշվի առնելով այն, որ նախապես խորհրդային Միության կառավարությունը և ժողովուրդը դիմեցին դրական միջոցի՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Չատուկ կառավարման ժամանակավոր կոմիտեի ստեղծման, հաշվի առնելով այն, որ նշված Կոմիտեն անարդյունավետ գտնվեց...՝ խորհրդային Միության հետ երկկողմանի քննարկումների ժամանակ աջակցել Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության արդարացի կարգավորմանը, որը իրապես կարտացոլի այդ մարզի ժողովրդի հայացքները»:

1993 թ. հունվարի 28-ին եվրատիրոքարանը որոշում ընդունեց, որում Չայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումը Ադրբեջանի կողմից որակվեց որպես մարդու իրավունքների կոպիտ խախտում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը

Հանրապետության անկախության իրավական հիմքերը

Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման շրջադարձային փուլ հանդիսացավ սեփական պետականության ստեղծումը՝ որպես բնակչության և նրա բնակեցման տարածքի անվտանգության ապահովման միջոց:

1991 թ. սեպտեմբերի 2-ին, Ադրբեջանական ԽՍՀ-ի Գերագույն խորհրդի կողմից օգոստոսի 31-ին «1918-1920 թթ. Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման» հռչակումից երեք օր անց, ԼՂԻՄ-ի Մարզային խորհրդի և Շահումյանի շրջանի շրջխորհրդի համատեղ նիստը Հռչակագիր ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակման մասին»: Հռչակագիրը որպես իրավական հիմք նշում էր ԽՍՀՄ-ի 1990 թ. ապրիլի 3-ի Օրենքը «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին», որը ինքնավար գոյացություններին ու պարփակ բնակվող ազգային խմբերին ամրագրում էր ԽՍՀՄ-ի փլուզման դեպքում սեփական պետաիրավական կարգավիճակի հարցի ինքնուրույն որոշման իրավունքը:

Հռչակագրում ամրագրված էր, որ ԼՂՀ-ի տարածքում գործում են ԽՍՀՄ օրենքները, որոնք չեն հակասում սույն Հռչակագրին: Դրանով իսկ հայտարարվել էր, որ Ղարաբաղը մնում է ԽՍՀՄ-ի տարածք, այն դեպքում, երբ Ադրբեջանն արդեն ոչ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախ պետական կարգավիճակի հարցի շուրջ հանրապետն տեղի ունեցավ 1991 թ. դեկտեմբերի 10-ին: Հանրաքվեի ընթացքում Լեռնային Ղարաբաղի բնակչության գերակշռող մասը արտահայտվեց ԽՍՀՄ-ի կազմից դուրս եկած Ադրբեջանական ԽՍՀ-ից լիիրավ անկախության օգտին:

Լեռնային Ղարաբաղում հանրաքվեն անցկացվեց նախկին ԽՍՀՄ-ում այն ժամանակ գործող օրենսդրության հիման վրա, մասնավորապես 1990 թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»

ԽՍՀՄ-ի Օրենքին համապատասխան: Վերոհիշյալ օրենքի 3-րդ հոդվածը նշում էր. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, մարզեր, շրջաններ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքվե են անցկացվում է յուրաքանչյուր ինքնավարությունում առանձին: Ինքնավար հանրապետությունների ու ինքնավար գոյացությունների ժողովուրդների կողմից պահպանվում է ԽՍՀ Միության կամ դուրս եկող միութենական հանրապետության կազմի մեջ իրենց մնալու մասին հարցի ինքնուրույն որոշման իրավունքը, ինչպես նաև իրենց պետաիրավական կարգավիճակի մասին հարցադրման իրավունքը: Այն միութենական հանրապետություններում, որոնց տարածքում առկա են ազգային խմբերի պարփակ բնակեցման տեղանքներ, որոնք բնակչության մեծամասնություն են կազմում տվյալ տարածքում, հանրաքվեի ամփոփման ժամանակ քվեարկության արդյունքներն այդ տարածքում առանձին են հաշվարկվում»:

Նշված օրենքը դարձավ ԽՍՀՄ-ի տարածքի միակ իրավական ակտը, որը ԽՍՀ Միության բոլոր սուբյեկտներին բացառակա հավասար իրավունքներ էր տալիս իրենց պետաիրավական կարգավիճակի ինքնուրույն ու ազատորեն որոշման համար և, որը կանոնակարգում էր ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ միութենական հանրապետությունների կազմից դուրս գալու գործառնությունը:

ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու գործընթացն Ադրբեջանն իրագործեց Ադրբեջանական ԽՍՀ-ի Գերագույն խորհրդի կողմից 1991 թ. օգոստոսի 30-ին «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» Հռչակագրի և 1991 թ. հոկտեմբերի 18-ին «Ադրբեջանական հանրապետության պետական անկախության մասին» Սահմանադրական ակտի ընդունման միջոցով: Նշված սահմանադրական նորմերը հռչակեցին Ադրբեջանին 1918-1920 թթ. գոյություն ունեցող Ադրբեջանական Ժողովրդավարական Հանրապետության պետաիրավական կարգավիճակի և, հետևաբար, 1918-1920 թթ. սահմանների «վերադարձումը», երբ Լեռնային Ղարաբաղը (ինչպես և Նախիջևանը) չէին մտնում Ադրբեջանի կազմի մեջ:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի նկատմամբ Ադրբեջանի կողմից իրավասության կորուստը և Խորհրդային ժամանակահատվածում գոյություն ունեցող Լեռնային Ղարաբաղի նկատմամբ տիտղոսի ոչ իրավական լինելը հստակորեն արտացոլված են «Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի լուծարման մա-

սին» Աղրբեջանի Հանրապետության 1991 թ. նոյեմբերի 23-ի օրենքում, որտեղ նշված է, որ «ընդունելով 1923 թ.-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ստեղծման ոչ իրավական լինելը...», ինչպես նաև որոշվում է. «Ուժը կորցրած ժամաշեղ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ստեղծման մասին» Աղրբեջանական ԿԳԿ-ի 1923 թ. հուլիսի 7-ի Դեկրետը և «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» Աղրբեջանական ԽՍՀ-ի 1981 թ. հուլիսի 16-ի Օրենքը»:

Այսպիսով, վերոնշյալ ակտերով հայտարարվում էր Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Աղրբեջանի իրավասության անվավերությունը 1920 թ. ապրիլի 28-ից (Աղրբեջանական ԽՍՀ-ի ստեղծման օրը) մինչև 1991 թ. օգոստոսի 30-ը («Աղրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» Հռչակագրի ընդունման օրը), իսկ Լեռնային Ղարաբաղի բռնի և անիրավ զավթումն իրականացրած կուսակցական մարմինները հայտարարվում էին գոյություն չունեցող:

Աղրբեջանի կազմից դուրս գալը Լեռնային Ղարաբաղն իրականացրեց ՄԱԿ-ի Կանոնադրությանը, միջազգային իրավունքի նորմերին ու այն ժամանակ գործող ԽՍՀՄ օրենսդրությանը լիովին համապատասխան 1991 թ. դեկտեմբերի 10-ին համաժողովրդական հանրաքվեի անցկացման ճանապարհով:

Հանրաքվեին դրված էր հետևյալ հարցը. «Համաձայն եք դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, ինքնուրույն կերպով որոշի այլ պետությունների ու հանրությունների հետ համագործակցության ձևերը»: Քվեարկության բերիկները կազմվել էին երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և աղրբեջաներեն, որոնք կայագրի միջոցով ուղարկվել էին Լեռնային Ղարաբաղի աղրբեջանական բնակավայրերը: Քվեարկության արդյունքներն էին. «Այո» - 108615 (քվեարկությանը մասնակցածների 99,89 տոկոսը), «Ոչ» - 24 (քվեարկությանը մասնակցածների 0,02 տոկոսը): Հանրաքվեին հետևում էին տարբեր երկրներից ժամանած դիտորդների ու զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մեծ խմբեր: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին հանրաքվեի արդյունքների մասին ցրանց կողմից կազմված Ավտից հետևում է, որ «Քվեարկության, քվեաթերթիկների բաժանման, դրանց ձևակերպման, ծայների հաշվման ընթացքում դիտորդները խախտումներ չեն հայտնաբերել: Դիտորդները անհրաժեշտ են գտնում նշել, որ հանրաքվեն անց էր կացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

նկատմամբ զինված ագրեսիայի պայմաններում, որն արտահայտվում է գեների տարբեր տեսակների կիրառմամբ, այդ թվում նաև հրետանու և հրթիռների, Ստեփանակերտ քաղաքի և այլ բնակավայրերի չընդհատվող ոմբակոծությամբ»:

Պրան հաջորդած, դեկտեմբերի 28-ին կայացած խորհրդարանական ընտրություններում ընտրվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը, որը ձևավորեց Հանրապետության առաջին կառավարությունը: 1992 թ. հունվարի 6-ին, ԼՂՀ-ի ժողովրդավար ընտրված խորհրդարանը ի դեմս Գերագույն խորհրդի, Հռչակագիր ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին»:

Նույն օրը ԼՂՀ պատգամավորները դիմեցին ՄԱԿ, աշխարհի բոլոր պետություններին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման և Արցախի հայության ցեղապանության կասեցման օգնության խնդրանքով: Այդ օրերին ձևավորվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կառավարությունը, Աղրբեջանի Հանրապետության կողմից բացարձակ շրջափակման ու դրան հաջորդած ռազմական ագրեսիայի պայմաններում անցավ իր պարտականությունների կատարմանը:

1991-1994 թվականների ռազմական գործողությունները

1990 թվականի սկզբից շոշափելի դարձավ Ղարաբաղյան Հակամարտության լարվածության ուժեղացման միտումը՝ որպես կողմերի միջև բացահայտ զինված հակամարտություն:

Իրավիճակը Լեռնային Ղարաբաղում և հարակից հայկական շրջաններում էվավել էր լարվում: Հայ ժողովրդի հանդեպ իրականացված պատժիչ գործողությունների շարքում էր «Օղակ» օպերացիան, որը Աղրբեջանական ԽՍՀ-ի և ԽՍՀՄ ՆԳՎ-ի միլիցիայի Հատուկ նշանակության ջոկատների համատեղ ուժերով իրականացվեց 1991 թվականի ապրիլի վերջից մայիսի սկիզբը: «Անձնագրային ռեժիմի ստուգման» ընդարկման տակ իրականացվեց պետական ահաբեկչության աննախադեպ ակտ: Առաջին գոեր դարձան Աղրբեջանական ԽՍՀ հասնարի շրջանի հայկական Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի բնակիչները, որտեղից տղամարդիկ դուրս տարվեցին անհայտ ուղղությամբ, իսկ «անձնագրային ռեժիմի ստուգումներն» ուղեկցվեցին բռնություններով, քալանով և ջարդերով:



Օգտվելով խորհրդային Միության փլուզումից, Ադրբեջանը սկսեց լայնածավալ ռազմական գործողություններ ծավալել Լեռնային Ղարաբաղի դեմ՝ հետապնդելով մեկ հիմնական նպատակ, այն է՝ ֆիզիկապես ոչնչացնել Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդին կամ նրան՝ հնչակված Լեռնային Ղարաբաղի Զանրապետության սահմաններից դուրս քշել:

Այն պահից, երբ 1991 թվականի վերջին, նախկին խորհրդային 4-րդ բանակի ստորաբաժանումներին հրաման տրվեց լքել Լեռնային Ղարաբաղի տարածքը, Լեռնային Ղարաբաղի Զանրապետությունը դեմ հանդիման մնաց Ադրբեջանի կանոնավոր զորամիավորումների դեմ, որոնք հազցեցված էին ժամանակակից մարտական տեխնիկայով և զենքով, որոնք լայնորեն օգտագործվում էին արտասահմանյան վարձկանների կողմից: Ադրբեջանական զինված ուժերի զինապահեստը 1992 թ. սկզբին էապես համալրվեց նախկին խորհրդային բանակի Անդրկովկասյան զինվորական օկրուգի հափշտակված պահեստների հաշվին: Դրանցում պահվում էին զինամթերքի հազարավոր վազոններ, որոնք, ըստ ռազմական փորձագետների կարծիքի, բավական էին մեկ տարի շարունակ ինտենսիվ ռազմական գործողություններ վարելու համար:

1992 թվական

Նոր՝ 1992 թվականի առաջին իսկ օրը, Ադդամի կողմից ադրբեջանական զորքերը 10 տանկերի ու մարտական մեքենաների ուղեկցությամբ հարձակվեցին հայկական հարամորտ գյուղի վրա և այն այրեցին:

Շարունակվում էր ԼՂՀ-ի մայրաքաղաքի և հայկական գյուղերի ինտենսիվ հրետանային ռմբակոծությունը:

Ադրբեջանի ազգային բանակի գլուխարտակը հունվարի 25-26-ին հարձակում ձեռնարկեց Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի վրա: Երկօրյա համառ մարտերի արդյունքում հարձակումը ետ մղվեց:

Յունվարի 31-ին Ադրբեջանը հարձակում սկսեց ճակատի ամբողջ երկայնքով:

Ռազմական գործողությունների ծավալումը երիտասարդ Զանրապետությանը դրեց իր պաշտպանության կազմակերպման ու կատարելագործման անհրաժեշտության առջև: Այս նպատակով ամբողջ ԼՂՀ-ում կանաչվորության հիմունքներով ստեղծվում էին ջոկատներ: Ուժերի կենտրոնացման ու գործողությունների կոորդինացման համար ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Զանրապետության ինքնապաշտպանության ուժերի շտաբը: Արդեն տարվա սկզբին Զանրապետության տարածքում

ծնավորվել էին 10 վաշտեր և դասակներ, որոնց կազմի մեջ մտավ շուրջ 1000 մարդ: Դա հանդիսացավ ԼՂՀ-ի կանոնավոր բանակի ստեղծման առաջին կարևոր քայլերից մեկը:

1992 թվականի հունվարի 21-ի լույս 22-ի գիշերը ոչնչացվեց Ստեփանակերտ քաղաքի Կրկժան թաղամասում (նախկին Քարքարաշեն) տեղակայված ադրբեջանական ՕՍՕՆ-ի հենակետը: Այնուհետև, փետրվարի 10-ին ոչնչացվեցին ԼՂՀ մայրաքաղաքին հարակից Սալիբեյլի և Ղուշչիլար գյուղերի կրակակետերը: Այնուամենայնիվ, իրավիճակը շարունակել էր մնալ ծայրահեղ լարված: Ղարաբաղ-ադրբեջանական սահմանի գրեթե ամբողջ երկայնքով տեղակայված թշնամու կրակակետերից գործում էր հեռահար հրետանին, որը մեծ ավերածություններ էր պատճառում ու տասնյակ զոհերի պատճառ դառնում:

Փետրվարի 19-ին Լեռնային Ղարաբաղի Զանրապետության Գերագույն խորհուրդը կոչով դիմեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և Անվտանգության խորհրդի մշտական անդամ երկրների ղեկավարներին՝ միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի զինված ագրեսիան կասեցնելու և Զանրապետության խաղաղ բնակավայրերի հրթիռահրետանային ռմկածողությունները դադարեցնելու համար: Փետրվարի 24-ին Լեռնային Ղարաբաղի Զանրապետության Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Զանրապետության զինված միավորումների իրավական կարգավիճակի մասին, որոնք բերվեցին ընդհանուր հրամանատարության ենթակայության տակ:

Զանրապետության ինքնապաշտպանության ուժերի առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ խաջալուում տեղակայված հակառակորդի ռազմակայանի՝ ոչնչացումը, ուր արագորեն տեղափոխվում էր զգալի քանակությամբ կենդանի ուժ, տեխնիկա և արկեր: Այդ գյուղի միջոցով միջանցքի բացումը, որը Ասկերան ավանը կապում էր Ստեփանակերտի հետ, ուներ հսկայական ռազմա-ստրատեգիական նշանակություն: Բացի այդ, անհրաժեշտ էր ապաշրջափակել Զանրապետության միակ օդանավակայանը, որը գտնվում էր այդ ադրբեջանաբնակ վայրի հսկողության տակ:

Փետրվարի 25-ին ԼՂՀ-ի ինքնապաշտպանության ջոկատները՝ զբաղեցնելով խոջալուից արևմուտք ընկած դիրքերը, հակառակորդից պահանջեցին լքել ռազմական հենակայանը և նրանց համար տրամադրված մարդասիրական միջանցքի միջոցով դուրս բերել խաղաղ բնակչությանը: Ադրբեջանի Զանրապետության այն ժամանակվա նա-

խագահը ավելի ուշ խոստովանեց, որ «միջանցքը, որով մարդիկ կարող էին հեռանալ, այնուամենայնիվ թողնվել էր հայերի կողմից»։ Սակայն ադրբեջանական զինվորականները այլ կերպ վարվեցին։ Գյուղում գտնվող բնակիչների որպես կենդանի վահան օգնագործելով, նրանք վերականգնեցին ԼՂՀ բնակավայրերի ռմբակոծությունները, իսկ երբ ստիպված եղան թողնել գյուղը, հենց նրանք Աղդամի շրջանի սահմանի մոտ գնդակահարեցին խաղաղ բնակիչների շարքայումերը։ Ադրբեջանի հենց նույն նախկին նախագահը այս հանցավոր անմեխաղեպ գործողությունը կապեց Ադրբեջանի քնդդիմադիր ժողովրդական ճակատի կողմից իրեն պաշտոնաձև անելու փորձերի հետ՝ ամբողջ կատարվածի պատասխանատվությունը բարդելով նրանք վրա։

1992 թվականի մարտի սկզբին ադրբեջանական բանակը լայնածավալ հարձակում ձեռնարկեց ամբողջ ճակատը երկայնքով։ Գլխավոր հարվածը հասցվեց Մարդակերտի, Ասկերանի և Մարտունու շրջանների ուղղությամբ։ Դաժան մարտերի արդյունքում հակառակորդի հարձակումը կասեցվեց։

Խոջալուի ռազմակայանի ոչնչացումից հետո Ստեփանակերտի հրետանային ռմբակոծությունները եապես չկրճատվեցին։ Ստեփանակերտից վեր խոյացող Շուշի քաղաքից գործնականում ամբողջ օրը իրականացվում էր ԼՂՀ-ի մայրաքաղաքի և այլ բնակավայրերի հրթիռ-հրետանային ռմբակոծություն։ Մայիսի 7-ին ադրբեջանական հետևակը և զրահատեխնիկան Մի-24 մարտական ուղղաթիռների աջակցությամբ գրոհ ձեռնարկեց Ստեփանակերտից հարավ-արևելք գտնվող պաշտպանական դիրքերի վրա։ Նույն օրը, միաժամանակ Շուշի և մերձակա ադրբեջանաբնակ բարձրադիր կետերից ԼՂՀ-ի մայրաքաղաքի վրա «Գրադ» կայանից և այլ տիպի հրետանուց արձակվեցին շուրջ 200 արկեր։

Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը որոշում կայացրեց ճնշել այդ բնակավայրերում տեղակայված հակառակորդի հենակետային կայանները։ ԼՂՀ-ի ինքնապաշտպանության ուժերի ստորաբաժանումները մայիսի 8-ի առավոտյան անցան հակահարձակման և իրենց հսկողության տակ վերցրեցին Լաչին-Շուշի մայրուղին։ Կեսօրին Շուշիի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան կողմերում ճեղքվեց։ Փողոցային մարտերի արդյունքում հայկական միավորումները արդեն երեկոյան վերցրեցին քաղաքի

կենտրոնական բաղամասերը։ Մայիսի 9-ին Շուշին ամբողջովին ազատագրվեց։

Շուշի և նրան մերձակա ԼՂՀ-ի այլ տարածքների կրակակետերի ոչնչացումից հետո ԼՂՀ-ի ինքնապաշտպանության ուժերի առջև խնդիր դրվեց բացել կենսականորեն կարևոր Շուշի-Լաչին-Ջաբուխ ճանապարհը, որը հնարավորություն կտար վերացնել Հանրապետության շրջափակումը և ապահովել բնակիչներին կենսագործունեությունը։

Մայիսի 18-ին Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի միավորումները մտան Լաչին (Քաշաբաղ), դրանով իսկ ճեղքելով եռամյա շրջափակման օղակը։ Մայիսի 20-ին Լաչինի միջանցքի միջոցով Գորիս-Ստեփանակերտ ճանապարհով ԼՂՀ-ի մայրաքաղաք հասցվեց հարյուրավոր տոննա մարդասիրական բեռներ. սննդամթերք, դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ։ Հակամարտության գոտում Շուշի-լաչինյան ռազմական օպերացիային հաջորդեց լարվածության որոշակի նվազում։

Մինչդեռ հակառակորդը կրկին պատրաստվում էր լայնածավալ ռազմական գործողությունների։

Յունիսի 12-ին ադրբեջանական զորքերը հարձակում ձեռնարկեցին Ճակատի հյուսիս-արևելյան, արևելյան և հարավ-արևելյան ուղղություններով։ Գրեթե 120 կիլոմետր ծավառությամբ ռազմական գործողությունների թատերաբեմ նետվեց փաստորեն Ադրբեջանի ամբողջ ռազմական ներուժը։ Բացի այդ, գործի դրվեցին նաև այստեղ տեղակայված նախկին խորհրդային 4-րդ բանակի ուժերը։ Զրահատեխնիկայի, «Գրադ» կայանների, հրետանու և ռազմական ավիացիայի օգնությամբ, հակառակորդին հաջողվեց գավթել ամբողջ Շահումյանի շրջանը, Մարդակերտի և Ասկերանի շրջանների մի մասը, և սերտորեն մոտենալ Ասկերան շրջկենտրոնին։ Ադրբեջանական բանակի իր չափերով անճախաղապ հարձակման արդյունքում այրվեցին ու հիմնահատակ արվեցին տասնյակ գյուղեր, իսկ Լեռնային Ղարաբաղի շուրջ 40 հազար բնակիչներ փախստական դարձան։

1992 թվականի հունվարից Ադրբեջանը ակտիվորեն օգտագործում էր «Գրադ» համազարկային կրակի հրթիռային համակարգերը (ՀԿՀՀ), բազմաթիվ Մի-24 մարտական ուղղաթիռներ, լայն տրամաչափի հրետանի, տանկեր և այլ ծանր տեխնիկա։ Ադրբեջանի կողմից Սու-25 գրոհային և այլ տիպի մարտական ինքնաթիռների օգտագործումից հետո, հատկապես 1992 թ. հունիսին ադրբեջանական բանակի լայնածավալ

ամառային հարծակումից հետո, որին օդի ակտիվ աջակցությամբ, արդեն մասնակցում էին հարյուրավոր միավոր տանկեր և հետևակի մարտական մեքենաներ, մարտական գործողությունները ձեռք բերեցին լայնածավալ պատերազմի բնույթ: Այդ ամենը ուղեկցվում էր խաղաղ հայկական բնակչության դեմ էլ ավելի նոր տեսակի սպառազինության կիրառմամբ՝ միջազգային-իրավական մարդասիրական նորմերի խախտումներով: 1991 թ. նոյեմբերից սկսած և մինչև 1994 թ. մայիսի զինադադարի կնքումը, ԼՂՀ-ի մայրաքաղաք Ստեփանակերտը փաստորեն ենթարկվում էր ամենօրյա ռմբակոծությունների զենքի տարբեր տեսակներից. «Ալազան» հրթիռներով, «Գրադ» կայանքներից, տանկերից, տարբեր տրամաչափի հրետանուց, իսկ այնուհետև նաև ենթարկվում էր ադրբեջանական ինքնաթիռների հարծակումներին: Ընդհանուր առմամբ քաղաքի վրա նետվել է ավելի քան 21000 «Գրադ» և 2700 «Ալազան» հրթիռ, տարբեր տրամաչափի 900 հրետանային արկ: 1992 թ. օգոստոսի 31-ին Ստեփանակերտի վրա նետվել է 20 «զոդիկավոր» ավիառումբեր, որոնց օգտագործումը քաղաքացիական բնակչության դեմ արգելված է միջազգային մարդասիրական իրավունքով: Այդ ռմբակոծության արդյունքում զոհվեցին 16 բնակիչներ, տարբեր աստիճանի ծանրությամբ վիրավորվեցին 121 մարդիկ: Ռազմական գործողությունների ընթացքում ադրբեջանական ավիացիան միայն Ստեփանակերտի վրա նետել է 180 ՄՈՎ (բեկորային ենթազինապաշարներով մեկանգամյա ռումբային կենտեյներ - «զոդիկավոր» ռումբ) և շուրջ հարյուր 500-կիլոգրամանոց բեկոր-ֆուգասային ռումբեր՝ ներառյալ 8 ՕԿՄՈ (ծավալուն դետոնացիայի ավիառումբեր կամ այսպես կոչված «վակուումային» ռումբեր):

1992 թ. հունիս-հուլիս ամիսներին, ադրբեջանական բանակի հարծակման արդյունքում զավթվեց ամբողջ Շահումյանի շրջանը, ինչպես նաև ԼՂՀ-ի Մարդակերտի շրջանի մեծ մասը, Մարտունու, Ասկերանի և Յադրուֆի շրջանների մի մասը: Այդպիսով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի ավելի քան 40 տոկոսը օկուպացվեց ադրբեջանական զորքերի կողմից:

Ստեղծված իրավիճակի հետ կապված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն հսրիուրոըը հունիսի 18-ին Հանրապետության տարածքում հայտարարեց արտակարգ իրավիճակ: Անցկացվեց մասնակի զորահավաք, որն ընդգրկեց պահեստի սերժանտներին ու

շարքայիններին, 18-ից 40 տարեկան զինակոչիկներին, մինչև 50 տարեկան սպաներին, հատուկ պատրաստություն ունեցող կամանդ:

Օգոստոսի 11-ին Ադրբեջանի նախագահը հրաման արձակեց 1991-1992 թթ. բանակից բոլոր զորացրվածներին զինակոչի մասին, ինչպես նաև զինված ուժերի շարքերում գտնվող ծառայողների ծառայության ժամկետների երկարաձգման մասին:

1992 թ. օգոստոսի 11-ին ԱՄՆ Կոնգրեսը ընդունեց «Ազատության պաշտպանության մասին ակտի» 907 փոփոխությունը, որը Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շրջափակման պատճառով արգելում էր կառավարական մարդասիրական օգնության ցուցաբերումը Ադրբեջանին:

Ազրեիայի մասշտաբների ընդլայնման պատճառով և ԼՂՀ-ի տարածքների հետագա զավթման կամխարգելման համար, պաշտպանության համակարգի կատարելագործման, ինչպես նաև Հանրապետության պետական կառավարման համակարգի վերակազմավորման անհրաժեշտություն առաջացավ:

Այդ նպատակով օգոստոսի 12-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն հսրիուրոըը Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին որոշում կայացրեց: Սկսվեց 18-ից 45 տարեկան տղամարդկանց զորահավաքը: 1992 թ. օգոստոսի 14-ին ստեղծվեց ԼՂՀ-ի Պաշտպանության պետական կոմիտեն, իսկ ինքնապաշտպանության ուժերի ցրված ջոկատները կազմափոխվեցին, և զինվորական կարգապահության ու միանմնյա ղեկավարության հիման վրա ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության Բանակը:

Ամառվա վերջից առավել լարված հատվածը մնում էր ճակատի Մարդակերտի ուղղությունը: Օգոստոսի 26-ին, մեծ կորուստների գնով հակառակորդին հաջողվեց զավթել Մարդակերտ-Քելբաջար ավտոմայրուղին, որը կարևոր ռազմավարական նշանակություն ուներ: Մարդակերտի ուղղությամբ գործող ղարաբաղյան փոքրաթիվ ուժերը հայտնվեցին ծանր կացության մեջ: Ծակատի տվյալ հատվածում զորքերի ամրապնդման նպատակով կատարվեց ուժերի վերախմբավորում, որի շնորհիվ ղարաբաղյան զորամիավորումներին սեպտեմբերի սկզբին հաջողվեց կասեցնել հակառակորդի առաջխաղացումը, իսկ Ասկերանի

ուղղությամբ՝ անցնել հակահարձակման ու ազատագրել այդ շրջանի մի շարք գյուղեր: Նույն ժամանակաշրջանում ամբողջովին զավթված Շահունյանի շրջանում ծավալվեց պարտիզանական շարժում:

Մեպտեմբերի վերջին տասնօրյակում աղբյեջանական զորքերը երկու անգամ փորձեր ձեռնարկեցին կտրել Լաչինի մարդասիրական միջանցքը, սակայն նրանք նախ կանգնեցվեցին նրանից 12 կիլոմետր հեռավորության վրա, իսկ հետո նաև՝ հետ չպարտվեցին:

Յուլեմբերի 19-ին դարաբաղյան ուժերը միջանցքի հարավում անցան հակահարձակման՝ դուրս գալով Դուբատուլի շրջանի սահմանների մոտ:

1992 թ. նոյեմբերին ԼՂՀ-ի բանակը Մարդակերտի շրջանի հյուսիսարևելքում հակահարձակողական գործողությունների շնորհիվ գործնականում հսկողության տակ վերցրեց Թաթառ-Մարդակերտ-Քելբաջար մայրուղին: Ամբողջ անսվա ընթացքում Մարդակերտի ճակատի ամբողջ երկայնքով մղվում էին դաժան մարտեր:

1992 թ. վերջին, ճակատի ամբողջ գծով միջատվեց մարտական գործողությունների ակտիվության նվազում:

1993 թվական

1993 թվականի հունվարի սկզբին աղբյեջան-դարաբաղյան ամբողջ ճակատի ռազմական գործողությունները թևակոխեցին նոր փուլ: Աղբյեջանցիները գործի դրեցին գրեթե իրենց ամբողջ զինանոցը. գրոհային ավիացիան, ծամր տանկերը, հետևակի մարտական մեքենաները:

Յունվարի 14-ին, աղբյեջանական զորքերը լայնամասշտաբ հարձակում ձեռնարկեցին Մարդակերտի շրջանի Կիչան և Սրխավենդ գյուղերի ուղղությամբ, ինչպես նաև Մարտունու շրջանի Շարտար գյուղի ուղղությամբ: Սակայն հակառակորդին չհաջողվեց առաջխաղացում ունենալ այդ հատվածներում:

Փետրվարի սկզբին դաժան մարտեր ծավալվեցին հյուսիսային ճակատում: Մարդակերտի շրջանի զավթված տարածքների ազատագրման նպատակով Յանրապետության Պաշտպանության բանակի հրամանատարությունը փետրվարի 5-ին հրաման տվեց հարձակման մասին: Մի քանի օրերի ընթացքում կտրելով հակառակորդի դիմադրությունը, դարաբաղյան ուժերը դուրս եկան Մարդակերտ-Քելբաջար ճանապարհի ռազմավարական հատվածի վրա:

Փետրվարի վերջին, համառ մարտերի շնորհիվ, դարաբաղյան ուժերին հաջողվեց լիարժեք հսկողության տակ վերցնել Մարասնգի ջրամբարը՝ այստեղ գտնվող էլեկտրակայանի հետ սկստել, որը կենսական կարևոր նշանակություն ուներ Յանրապետության համար:

Մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը ընկած ժամանակահատվածում սկսվեցին Քելբաջարի շրջանի ռազմական հենակայանների ոչնչացման գործողությունները, որոնք լուրջ պայտնալիք էին ներկայացնում ԼՂՀ արևմտյան սահմանների համար: Ապրիլի 3-ին ճնշվեցին Քելբաջար շրջաններում կրակակետերը: Քելբաջարը Գյանջայի հետ կապող խաչմերուկի զավթումից հետո, դարաբաղյան ուժերը ապրիլի 5-ին դուրս եկան Օմարի լեռանցք: Ապրիլի երկրորդ կեսից իրավիճակը ճակատում համեմատաբար հանգստացավ:

Սակայն, գարնան վերջում և ամառվա սկզբին իրավիճակը կտրուկ փոխվեց: Կարծատև դադարից հետո հակառակորդը վերսկսեց մարտական գործողությունները ամբողջ ճակատի երկայնքով՝ հարված գլխավոր ուղղություն ընտրելով արևելյան՝ Մարտունու ուղղությունը: Սակայն դարաբաղյան զորքերի պաշտպանությունը ճեղքելու բոլոր փորձերը անպարտյուն գտնվեցին:

Ամռան սկզբին Յանրապետության Պաշտպանության Բանակի հրամանատարությունը ձեռնամուխ եղավ Մարդակերտ քաղաքի ազատագրման ծրագրի իրականացմանը՝ միաժամանակ մի քանի ուղղություններով հարձակումներ ձեռնարկելով: Մարտերն իրենց զազաբնակետին հասան հունիսի 27-ին, և վճռական ու փոխհամաձայնեցված գործողությունների շնորհիվ, գրեթե մեկ տարի աղբյեջանական օկուպացիայի տակ գտնվող քաղաքն ազատագրվեց:

Յուլիսի 4-ին աղբյեջանական բանակը խոշոր հարձակում սկսեց միաժամանակ ճակատային գծի՝ Ասկերանի, Չադրուքի և Մարդակերտի հատվածներում՝ ավիացիայի և գրահատետանիկայի աջակցությամբ: Բոլոր ուղղություններով հակառակորդը հետ չպարտվեց դեպի նախնական դիրքերը: Դարաբաղյան ուժերի հսկողության տակ անցավ Աղղամի շրջանի Շելլի գյուղի կարևոր ռազմավարական բարձունքը, որտեղից մշտական հրետամային ոմբակոծությունների էին ենթարկվում Ասկերանի շրջանի բնակավայրերն ու Ստեփանակերտը:

Այնուամենայնիվ, ԼՂՀ-ի մայրաքաղաքը շարունակվում էր ոմբակոծվել Աղղամ քաղաքից, որտեղ գտնվում էին մեծ քանակությամբ հեռահար հրետանին և «Գրառ» կայանները: Ստեփանակերտի ամվտան

գության ապահովման նպատակով ԼՂՀ-ի զինված ուժերի առջև խնդիր դրվեց ոչնչացնել Ադրաբայի ռազմական հենակայանը: Հուլիսի 23-ին դարաբայյան գործերը կոտրելով հակառակորդի դիմադրությունը, որը ճակատի այդ հատված էր նետել իր զինված ուժերի հիմնական մասը, մարտերով մտան Ադրամ: Դրանով իսկ վերացվեց ոչ միայն ԼՂՀ-ի մայրաքաղաքի մշտական ռմբակոծությունների սպառնալիքը, այլև Ասկերանի ու հարակից շրջանների վրա կատարվող հարձակումները:

Այդ խոշոր ռազմական հենակայանի ոչնչացման արդյունքում Ադրբեջանի ղեկավարությունը ստիպված էր հանդես գալ կրակի դադարեցման առաջարկությամբ: Հուլիսի 25-ին, հակամարտության ընթացքում գործնականում առաջին անգամ, համաձայնություն ձեռք բերվեց զինադադարի մասին:

Ասկայն, օգոստոսի սկզբին իրավիճակը նորից կտրուկ փոխվեց: Անդադար հարցապահումներ սկսվեցին դարաբայյան դիրքերի վրա: Դրանք հիմնականում վարվում էին Ջեբրայիլի ուղղությամբ: Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի գրագետ գործողությունների շնորհիվ, այդ շրջանում հակահարձակողական գործողությունների ընթացքում ոչնչացվեցին հակառակորդի մի շարք ռազմական հենակայաններ:

Օգոստոսի 16-ին ադրբեջանական Ֆիզուլի քաղաքի կողմից հարձակում ձեռնարկվեց Մարտունու շրջանի հարավային, Հադրուբի շրջանի արևելյան սահմանների ուղղությամբ: ԼՂՀ-ի Պաշտպանության Բանակի զորամիավորումներին հաջողվեց ոչ միայն պահպանել իրենց դիրքերը, այլ նաև մարտերի ընթացքում ազատագրել նախկինում օկուպացված Հադրուբի շրջանի հարավում տեղակայված մի շարք գյուղեր:

Օգոստոսի երկրորդ կեսին մարտեր ծավալվեցին Ֆիզուլի-Ջեբրայիլ-Ղուբաուլի գծի երկայնքով: Օգոստոսի 22-ին ադրբեջանական զորքերը ստիպված էին թողնել Ֆիզուլի քաղաքը և համանուն շրջանը: Մեկ օր անց դարաբայյան գործերը մտան Ջեբրայիլ շրջկենտրոն, իսկ ևս երկու օրից իրենց հսկողության տակ վերցրեցին համանուն շրջանի տարածքը: Օգոստոսի 26-ին ամբողջովին ազատագրվեց ԼՂՀ-ի Հադրուբի շրջանի տարածքը: Օգոստոսի 29-ին ադրբեջանական կողմը Լաչինի մարդախորտական միջանցքի հարավային դիրքերը ճեղքելու փորձ ձեռնարկեց, սակայն ետ նետելով հակառակորդին, ԼՂՀ-ի բանակի ստորաբաժանումները հակահարձակման անցան և օգոստոսի 31-ին մտան Ղուբաուլի շրջկենտրոնը: Նույն օրը Ադրբեջանական Հանրապետության

տության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև համաձայնագիր ստորագրվեց 10-օրյա զինադադարի մասին և համաձայնություն ձեռք բերվեց մինչև սեպտեմբերի 10-ը Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարների միջև հանդիպում կազմակերպելու մասին: Սակայն, հիմնականից ռազմականից քաղաքական օրակարգ տեղափոխելու առումով, համաձայնագիրը որևէ գործնական արդյունք չտվեց: Ծակատուն հարաբերական հանգիստը պահպանվեց մեկկես ամսից պակաս:

Հոկտեմբերի 10-ի գիշերը Ադրբեջանը վերսկսեց մարտական գործողությունները՝ ճակատային գծի Հադրուբի հատվածում: Հոկտեմբերի 21-ին ադրբեջանական բանակի զորամիավորումները հարձակում սկսեցին Հադրուբ-Ջեբրայիլ ուղղությամբ, որի արդյունքում նրանց հաջողվեց գավթել մի բանի բարձունքներ, դրանով իսկ կրկին վտանգի տակ դնելով Հադրուբի և մերձակա գյուղերի բնակչության անվտանգությունը:

Հոկտեմբերի 24-ին, ԼՂՀ-ի Պաշտպանության Բանակի զորքերը անցան հակահարձակման ճակատի հարավային ուղղությամբ՝ ճնշելով հակառակորդի մի շարք խոշոր կրակակետեր, մասնավորապես, Հորադիզ բնակավայրում: Ջբաղեցնելով այդ ռազմական հենակետը, դարաբայյան ուժերը Ադրբեջանից մեկուսացրեցին Ջանգելանի շրջանը և Ջեբրայիլի ու Ղուբաուլի շրջանների մի մասը:

Նոյեմբերի 1-ի առավոտյան ԼՂՀ-ի Պաշտպանության Բանակի մարտիկները իրենց հսկողության տակ վերցրեցին Ջանգելան շրջկենտրոնը՝ հարակից բնակավայրերի հետ միասին:

Դեկտեմբերի 10-ից ադրբեջանական կողմը երեք անգամ հարձակումներ ձեռնարկեց ճակատի հարավ-արևելյան հատվածում, սակայն ԼՂՀ-ի Պաշտպանության Բանակին հաջողվեց ետ մղել հակառակորդի բոլոր հարձակումները:

Դեկտեմբերի 15-ին Ադրբեջանի Աղջաբեդի շրջանի հենակետից սկսվեց Մարտունու շրջանի բնակավայրերի, այդ թվում նաև Մարտունի քաղաքի գանգվածային իրփոռհրետանային ռմբակոծությունը: Դեկտեմբերի 19-ին տանկերի ու ավիացիայի աջակցությամբ, ադրբեջանական զորք կրկին գրոհեց դարաբայյան բանակի դիրքերը Մարտունու շրջանի արևելքում: ԼՂՀ-ի զինված ուժերին հաջողվեց կասեցնել հարձակումը, իսկ դեկտեմբերի 20-ի գիշերը հակառակորդի ետ չափուտ նախնական դիրքերը: Դեկտեմբերի 22-ին իրտանային ռմբակոծության

ենթարկվեցին դարաբաղյան գորքերի դիրքերի ԼՂՀ-ի հյուսիսային ու արևելյան հատվածներում, իսկ ճակատի հարավ-արևելյան հատվածում աղբեջանական ուժերն անցան հարձակման: Հաջորդ օրվա ամբողջ ընթացքում հակառակորդն անօգուտ փորձում էր ճեղքել դարաբաղիցների պաշտպանական սահմանները շուրջ 30 կմ երկարություն ունեցող ճակատի ամբողջ երկայնքով:

Ղեկտնների 26-27-ին աղբեջանական գորքերը հարձակողական գործողություններ էին վարում Մարտկերտի, Մարտունու և Հաղուրթի ուղղություններով, սակայն նրանց առաջխաղացումը կասեցվեց:

1993 թ. վերջին դարաբաղյան կողմի հսկողության տակ անցավ երկաթուղային հանգույց Հորադիզից մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ընկած ամբողջ տարածքը, ինչը հնարավորություն տվեց ԼՂՀ-ի հարավային սահմանների համար ստեղծել անվտանգության գոտի:

Այդ ժամանակաշրջանում Աղբեջանի ղեկավարությունը 18-ից 40 տարեկան տղամարդկանց զորահավաք հայտարարեց: Բացի այդ, դարաբաղյան ճակատում աղբեջանական բանակի կազմում գործում էին նաև վարձկաններ, այդ թվում շուրջ մեկուկես հազար Աֆղանստանի մուջահիդներ, ինչի մասին բազմիցս վկայել են նաև միջազգային դիտորդները: Աղբեջանի կողմում վարձկանների մասնակցությունը պատերազմին հաստատում են նաև անձնակազմ փաստաթղթերը, զինվորական քարտեզները, նամակներն ու լուսանկարները, բառարանները, ազգային արտադրույթը, որոնք որպես ավար ընկել էին դարաբաղյան կողմի ձեռքը:

1994 թվական

1994 թ. սկզբին Աղբեջանը իրավիճակը իր հսկողության տակ վերցնելու և նևել փորձ նախաձեռնեց՝ ամբողջ ճակատով ակտիվացնելով հարձակողական գործողությունները:

Բարձրադիր Օմարի լեռնանցքից մինչև Արաքս գետը ծանր մարտեր ծավալվեցին: Ուշադրություն չդարձնելով հսկայական կորուստների վրա, հակառակորդը չէր հրաժարվում իր ծրագրերից: Պաշտպանվելով և մի շարք հաջողված հակահարձակումներից հետո, ԼՂՀ-ի գորքերը փետրվարի սկզբին ձեռնամուխ եղան Օմարի լեռնանցքում տեղակայված հակառակորդի հենակայանների ոչնչացմանը:

Փետրվարի 18-ին հյուսիսային հատվածը՝ ներառյալ Օմարի լեռնանցքը, դրանով իսկ Քելբաջարի շրջանն ամբողջովին անցավ դարաբաղյան ուժերի հսկողության տակ: Փետրվարի վերջին և մարտի սկզբին հիմնական մարտերը ծավալվում էին ճակատի հարավ-արևելյան հատվածում Հորադիզի ուղղությամբ: Հակառակորդի գորքերը գրահատակային ուժերի, հրետանու և ավիացիայի աջակցությամբ, փորձեցին ճակատային հարվածով ճեղքել դարաբաղիցների պաշտպանությունը և շարժվել դեպի Ֆիզուլի: Սակայն, վերջիններիս հաջողվեց ոչ միայն պահպանել իրենց դիրքերը, այլ նաև առանձին հատվածներում անցնել հակահարձակման:

Ապրիլի 10-ին, հյուսիս-արևելյան ճակատում իրականացված հակահարձակողական գործողությունների ընթացքում, ԼՂՀ-ի Ձինված ուժերը մի շարք ռազմավարական կարևոր բարձունքներ գրավեցին Գյուլիստան-Թալիշ հատվածում: Ապրիլի կեսին ԼՂՀ-ի Պաշտպանության Բանակը ազատագրեց Թալիշ, Չալլու, Մատաղիս և Լեվոնարիս գյուղերը:

Ռազմական պարտությունները Աղբեջանին ստիպեցին ընդունել միջնորդ կողմերի առաջարկությունը զինադադարի մասին:

Մայիսի 5-ին Ռուսաստանի, Ղրղըզստանի և ԱՊՀ Միջնորդության կողմից Ասամբլեայի միջնորդությամբ, Ղրղըզստանի մայրաքաղաք Բիշքեկում, Աղբեջանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը Արժանագրություն ստորագրեցին: Վերջինս դարաբաղյան հակամարտության կարգավորման պատմության մեջ մտավ «Բիշքեկյան արժանագրություն» անվանումով, այդ հիման վրա մայիսի 12-ին նույն մասնակիցների կողմից Համաձայնագիր ձեռք բերվեց կրակի դադարեցման մասին, որը գործում է մինչ օրս:

Մայիսի 16-ին Մոսկվայում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի, Աղբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության Բանակի հրամանատարի միջև, որի ընթացքում հաստատվեց կողմերի պատրաստակամությունը հավատարիմ մնալու զինադադարի մասին ձեռքբերված պայմանավորվածությանը: Նախապատրաստվեց նաև փոստաթուղթ՝ «Պայմանավորվածություն 1994 թ. փետրվարի 18-ի Արժանագրության իրականացման կարգի մասին», որը նախատեսում էր դարաբաղյան ու աղբեջանական

գորքերի հեռացումը, կողմերի միջև բուֆերային գոտու ստեղծումը և խաղաղարար ուժերի տեղակայումը: Փաստաթղթի տակ իրենց ստորագրությունները դրեցին Ռուսաստանի Պաշտպանության պաշտպանության նախարարը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության Բանակի հրամանատարը: Սակայն Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարը փաստաթղթի տակ չստորագրեց: Որան հրատապ կերպով կանչեցին Բաքու: Չնայած դրան, Ղարաբաղյան Հանրապետության գոտուն ձեռք բերվեց երկարատև զինադադար:

Հետպատերազմական ժամանակաշրջան

-հունանիտար հետևանքները

Փախստականների և հարկադիր վերաբնակեցվածների հարցը ընդհանուր առմամբ հանդիսանում է Ղարաբաղյան Հակամարտության, մասնավորապես 1991-ից մինչև 1994 թթ. կողմերի միջև ռազմական գործողությունների հունանիտար հետևանքների առավել կարևոր հարցը: Այն ուղղակիորեն կապված է մարդու իրավունքների հարգանքի ու պաշտպանության միջազգային-իրավական սկզբունքի հետ: Փախստականների և հարկադիր վերաբնակեցվածների հարցը տարբեր տեսանկյուններից միաժամանակ հակամարտության և պատճառ է, և հետևանք: Վերաբնակեցված անձանց իրավունքների պաշտպանությունը պետք է հանդիսանա հակամարտության լուծման և հետևորդֆիլկտային հասարակության խաղաղաշինության անքակտելի ու կենտրոնական հարցերից մեկը, ինչպես նաև պետք է լինի տարածաշրջանային անվտանգության անքակտելի տարրը:

Միջազգային արջյուրները խոսում են 360 հազար հայերի մասին, որոնք հարկադրված էին լքել Ադրբեջանական հսՄՀ-ը 1988-1990 թթ.: Նշվում է նաև Լեռնային Ղարաբաղում և Որսն հարակից ճակիհն Ադրբեջանական հսՄՀ-ն տարածքներում (Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերահսկման տակ գտնվող) անմիջական մարտական գործողությունների գոտուց տեղափոխվածների մոտավոր թիվը՝ 600 հազար մարդ:

Փախստականների ու հարկադիր վերաբնակեցվածների քանակի հարցը քաղաքականացված է դարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրում կողմերի մտեղեցումների ներկայիս ձևաչափում,

սակայն այն չի կարող չանդրադառնալ «փախստական» և «հարկադիր վերաբնակեցված» կարգավիճակ ունեցող անձանց (ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական կողմի) քանակական ներկայացվածության օբյեկտիվ պատկերի բացահայտման վրա: Ադրբեջանը բերում է իր փախստականների ու հարկադիր վերաբնակեցվածների քանակի բացահայտ ուժեղացած թվեր, իսկ Հայաստանը փաստարկված ձևով հերքում է՝ զուգահեռաբար նշելով, որ, օրինակ, 1988-1989 թթ. Հայկական հսՄՀ-ն և դարաբաղյան հակամարտության ռազմական գործողությունների գոտին լքած ադրբեջանցիների մոտ «փախստական» կարգավիճակի բնորոշման հարցում առկա են զգալի իրավական ու քաղաքական թերություններ:

Համաձայն հսՄՄ բնակչության 1989 թ. Համամիութենական մարդահամարի տվյալների, Ադրբեջանական հսՄՀ-ում բնակվում էին 391 հազար հայեր: Հարկ է նշել, որ հսՄՀ Միության տվյալ մարդահամարի իրականացման պահին արդեն իսկ առկա էին Ադրբեջանական հսՄՀ-ից հայերի և Հայկական հսՄՀ-ից ադրբեջանցիների գանգվածային հոսքեր, ընդ որում վերջիններիս առումով կարելի է նշել, որ 1989 թ. վերջին Հայկական հսՄՀ-ի գրեթե ամբողջ ադրբեջանցի բնակչությունը տեղափոխվել էր իր ազգային միութենական հանրապետության տարածքը:

Հայկական կողմի բերած տվյալներն առավել ուշագրավ են, հատկապես ադրբեջանական կողմի «ադրբեջանցի մեկ միլիոն փախստականներ» թվաքանակի շուրջ աքստրակտ գործառնությունների հիմնապատկերի վրա:

1988 թվականին Ադրբեջանական հսՄՀ-ում իրականում ապրում էին շուրջ 500 հազար հայեր (ըստ 1979 թ. մարդահամարի – 475 հազ. մարդ): Ադրբեջանական հսՄՀ-ի բոլոր խոշոր քաղաքներում գործնականում բնակչության զգալի մասը կազմում էին հայերը: Ադրբեջանական հսՄՀ-ի Շենակիի, Իսմայիլի, ժղամուլի (Ներկայիս՝ Բեյլազանի), Կուլուկաշենի և մի շարք այլ շրջաններում կային տասնյակ հայկական գյուղեր, որտեղ պարփակ կերպով բնակվում էին տասնյակ հազարավոր հայեր:

Ադրբեջանում կատարված ցեղասպանության ու ազգային գտուների գործողությունների պատճառով ավելի քան 400 հազար հայեր փախստական դարձան: 1988 թ. փետրվարի եռօրյա ջարդերի ընթացքում առաջինը բռնի տեղահանվեցին Սոււզայիի հայերը: Նույն թվականի գարնան-ամռան ընթացքում տասնյակ հազարավոր հայեր լքե-

ցին Բաբուն: 1988 թ. աշնանը կատարված ջարդերի ու ազգային գտուների հետևանքով բռնի տեղահանվեցին Լեռնային Ղարաբաղի հյուսիսային հատվածի, Մոլդովեյանական հԱՄ-ի բոլոր գյուղական շրջանների հայերը և բաքվեցի հայերի գերակշռող մասը: 1990 թ. հունվարի Բաքվի հայերի ջարդի հետևանքով քաղաքը լքեցին հայկական բնակչության մնացորդները:

Փախստականների նշված 400 հազար թվաքանակը բերվում է առանց հաշվի առնելու Լեռնային Ղարաբաղի հայերին, որոնք հարկադրված էին լքել ինքնավարությունը, իսկ այնուհետև՝ հակամարտության սրման պատճառով, նաև՝ հռչակված ԼՂՀ-ն: Ըստ 1989 թ. մարդահամարի պաշտոնական տվյալների, ԼՂԻՄ-ի բնակչությունը կազմում էր 189 հազ. մարդ, որոնցից 145,5 հազ. հայեր էին (76,9 տոկոս), 40,6 հազարը՝ ադրբեջանցիներ (21,5 տոկոս): Նույն թվականի տվյալներով Շահումյանի շրջանում ապրում էին ավելի քան 17 հազ. հայեր (շրջանի բնակչության շուրջ 80 տոկոսը) և մոտ 3 հազ. ադրբեջանցիներ: Մարդահամարի ընթացքում չհաշվառված էին մնացել Բաքվից, Սումգայիթից և այլ քաղաքներից մեկնած շուրջ 23 հազար հայ փախստականները, որոնք 1989 թ. հունվարի մարդահամարի իրականացման պահին փաստորեն բնակվում էին նախկին ԼՂԻՄ-ում՝ չունենալով տեղի գրանցում, հետևաբար նրանց անձնագրերում գրանցման մասին նշումը վկայում էր բնակության նախկին վայրի մասին:

Այսպիսով, ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի հայկական բնակչությունները միասին, որոնք մտան 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական-տարածքային բնակչության կազմի մեջ, հաշվվում էր 185 հազար թվաքանակով, ադրբեջանցիներինը՝ 44 հազ., և 3,5 հազար մարդ կազմում էին ռուսները, հույները, ուկրաինացիները, թաթարները և այլ ազգությունները:

1992 թ. ամռան-աշնան մարտական գործողությունների ընթացքում ադրբեջանական զինված խմբավորումներն ավերջովված ավաթեցին ԼՂՀ-ի Շահումյանի շրջանը, Մարդակերտի շրջանի երկու-երրորդը, ԼՂՀ-ի Մարտունու, Ասկերանի և Չաղարիքի շրջանների մի մասը: Դրա հետևանքով շուրջ 66 հազար հայեր դարձան փախստականներ (լքեցին հռչակված ԼՂՀ-ի տարածքը) և հարկադրված վերաբնակեցվածներ (տեղափոխվեցին ԼՂՀ-ի այլ շրջանները): 1994 թ. մայիսին, մարտական գործողությունների ավարտից հետո, մոտ 35 հազար հայ փախստականներ վերադարձան ԼՂՀ-ի տարածք:

1991-1994 թթ. ընթացքում ռազմական գործողությունների մեջ ընդգրկված տարածքներից հայ փախստականների ընդհանուր թվաքանակը կազմել է 114 հազար մարդ, այդ թվում նաև 83 հազարը Հյուսիսային Լեռնային Ղարաբաղի շրջաններից:

Հյուսիսային Լեռնային Ղարաբաղը ներառում է այն տարածքները, որոնք հայտնվել են 1923 թ. ձևավորված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքից դուրս: 1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի ԿԳԿ-ի կողմից խախտելով 1921 թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշումը, ընդունված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման մասին» Դեկրետում որոշվել էր. «Լեռնային Ղարաբաղի հայկական հատվածից ստեղծել ինքնավար մարզ...»: Այդպիսով, մարզի տարածքից դուրս են թողնվել Լեռնային Ղարաբաղի հարավային (Ղուբաթլու, Ջանգելան, Ջաբրայիլ, Ֆիզուլի), արևմտյան (Քելբաջար, Լաչին) և հյուսիսային (Գետաբեկ, Ղաչքեսան, Խանլար, Շամխոր, Շահումյան) շրջանները: Հյուսիսային Լեռնային Ղարաբաղի սահմանների մեջ մտնում են ներկայիս Գետաբեկի, Ղաչքեսանի, Խանլարի և Շամխորի շրջանները, ինչպես նաև Գյանջա քաղաքը (Կիրովաբադ), որը մտնում էր պատմական հայկական Արցախի արեալի մեջ (հայկական տեղանունը՝ Գանձակ քաղաք):

ԼՂՀ-ի շուրջ 30 հազար հայեր համարվում են ներքին տեղաշարժված անձինք (զերբազանցապես ներկայումս Ադրբեջանի կողմից զավթված Լեռնային Ղարաբաղի Շահումյանի շրջանից և Մարդակերտի շրջանի մի մասից): Եվս 77 հազար մարդ համոզմունքով են Հայաստանի Հանրապետության Ադրբեջանի հետ սահմանամերձ շրջաններից ներքին տեղաշարժված անձինք, որոնք տուժել են ռազմական գործողությունների հետևանքով:

1991 թ. տվյալներով ԼՂՀ-ի ընդհանուր հայկական բնակչության 185 հազար մարդ թվաքանակից, 1998 թ. դրությամբ անմիջապես ԼՂՀ-ից փախստականների ու ներքին տեղահանվածների թվաքանակը կազմում էր 61 հազար մարդ: Նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքից (այդ թվում նաև Հյուսիսային Լեռնային Ղարաբաղի տարածքից) փախստականների հաշվառումով հայ փախստականների ու ներքին

տեղահանվածների քանակը Լեռնային Ղարաբաղի ընդհանուր կտրվածքով հասնում է 144 հազար մարդու:

1988-1992 թթ. ընթացքում Հայկական ԽՍՀ-ն լքել է 168 հազար արդրեջանցի, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ 40 հազար: Ներկայումս ԼՂՀ-ի կողմից վերահսկվող նախկին Արդրեջանական ԽՍՀ-ի տարածքների հարկադիր վերաբնակեցվածներ են դարձել շուրջ 375 հազար արդրեջանցիներ: Այսպիսով, արդրեջանցի փախստականների ու հարկադիր վերաբնակեցվածների ընդհանուր թվաքանակը կազմում է շուրջ 583 հազար մարդ:

Արդրեջանցի տեղահանվածների թվից մի զգալի հատված չի կարելի համարել փախստական: Նախ, Հայկական ԽՍՀ-ն լքած արդրեջանցիների գերակշռող հատվածը կարողացել է փոխանակել իր բնակարանը Արդրեջանական ԽՍՀ-ից հայ փախստականների հետ, իսկ մեկ այլ հատվածը Հայկական ԽՍՀ-ի կառավարության կողմից նյութական փոխհատուցում է ստացել: 1989 թ. Հայաստանի իշխանությունների կողմից միակողմանի կերպով շուրջ 14,5 հազար արդրեջանական ընտանիքների փոխհատուցում վճարվեց Հայաստանում թողնված տների ու գույքի համար՝ այն ժամանակ ԱՄՆ 110 մլն. դոլարին համարժեք գումար: Այս հիմնադրամների վրա, Արդրեջանական ԽՍՀ-ից ավելի քան 400 հազար հայ փախստականներից ոչ մեկը վերջինից ոչ միայն չստացավ նյութական փոխհատուցում, այլև իր կյանքի ամիջյան սպառնալիքի տակ շտապ կարգով լքեց հանրապետությունը՝ դրանից բխող բոլոր նյութական-գույքային ու բարոյական կորուստներով:

Ամիջապես Լեռնային Ղարաբաղի և նրան հարակից շրջանների արդրեջանական բնակչության մի զգալի մասը չի կարող համարվել փախստական այն բանի հետևանքով, որ մասնաճակտով մասնակցությունն է ունեցել 1991-1994 թթ. ռազմական գործողություններին, ինչպես նաև այն պատճառով, որ բնակչության այն հատվածը, որը բնակվում էր իր քաղաքացիական պատկանելության հանրապետությունում, հռչակված ԼՂՀ-ի տարածքից դուրս և ստիպված էր տեղափոխվել այդ հանրապետության այլ շրջանները, չի կարող դիտարկվել «Փախստական» միջազգային-իրավական տերմինի ներքո, այլ համապատասխանում է «հարկադիր վերաբնակեցված» բնորոշմանը:

Ըստ փախստականների գործերով ՄԱԿ-ի Գերագույն հանձնակատարի Վարչության ամենամյա վիճակագրական զեկույցի տվյալների (ՄԱԿ-ի ՓԳՅԿ, 2006 թ.), Արդրեջանի տարածքում հարկադիր վերաբնա-

կեցված կարգավիճակով գտնվում էին 686 586 անձինք: Փախստականի կարգավիճակի մասին 1951 թ. Կոնվենցիային համապատասխան Արդրեջանի տարածքում փախստականի կարգավիճակով ժտված են 2618 մարդ, որոնք գտնվում են ՄԱԿ-ի ՓԳՅԿ պաշտպանության տակ: Մինևնյուն ժամանակ, Արդրեջանից փախստականի կարգավիճակով ժտված էր 126 հազ. մարդ, որոնցից միայն 5485-ի վրա էր տարածվում Վարչության պաշտպանությունը: Հայաստանի տարածքում գտնվում էին 113714 փախստականներ, որոնցից միայն 5871-ն էին գտնվում ԽՍՀ-ի ՓԳՅԿ-ի պաշտպանության ներքո (Statistical Yearbook 2006. Trends in Displacement, Protection and Solutions. The Senior Statistician Field Information and Coordination Support Section Division of Operational Services United Nations High Commissioner for Refugees. Geneva. December 2007):

1988-1990 թթ. ժամանակահատվածում Արդրեջանական ԽՍՀ-ում իրականացվել է ազգությամբ հայ անձանց բռնի և զանգվածային տեղահանում: Ելնելով զուտ ազգային պատկանելությունից հայերը տեղահանվում և զրկվում էին Արդրեջանական ԽՍՀ-ի քաղաքացիական պատկանելության փաստացի վիճակից բխող պաշտպանությունից: Արդրեջանական ԽՍՀ-ի տարածքից հայերի տեղահանումը առնվազն տեղի էր ունենում Խոփրդային Արդրեջանի ղեկավարության աջակցությամբ: Արդրեջանական Հանրապետության ներկայիս իշխանությունների որոշումները Արդրեջանական ԽՍՀ-ի իրավական ժառանգությունից չի նշանակում այն, որ՝ հռչակելով ժողովրդավարական պետություն և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում վերցնելով միջազգային-իրավական պարտավորություններ, նրանք կարող են խուսափել ինչպես ֆիզիկական և նյութական վնասի հատուցումից (իրավաբանական փաստ է - միջազգայնորեն դատապարտվող առավել ծանր հանցանքներով ուղեկցվող բռնի տեղահանում, ներառյալ ցեղասպանության բնույթի գործողությունները), այնպես էլ գերադասել վնասի հարետուցումը այն անձանց, որոնք ենթարկվել են ցեղասպանության ու ազգային գտնում գործողությունների (իրավաբանական փաստ - օտար գույքի անօրինական յուրացում և առանց համապատասխան նյութական փոխհատուցման վճարման):

- ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի հիմնական փուլերը

Ղարաբաղյան Հակամարտության կարգավորման գործընթացի սկիզբը կարելի է համարել 1991 թ. աշունը, երբ հակամարտության երկու հիմնական կողմերը՝ Աղբրեջանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որոշեցին նախկին Աղբրեջանական ԽՍՀ-ի տարածքում սեփական պետականության կառուցման իրենց ջարդաքակտիկ-իրավական կողմնորոշիչները և երբ հատկապես իրական դարձավ կողմերի միջև հակամարտության վերածույնը բաց ու լայնածավալ ռազմական հակամարտության մակարդակի:

1991 թ. սեպտեմբերի 20-23-ին իրականացվեց Ռուսաստանի և Ղազախստանի միջնորդական առաքելությունը, որի ընթացքում այդ երկրների ղեկավարները այցելեցին Ստեփանակերտ, Բաքու և Երևան:

Այդ առաքելության արդյունքում, 1991 թ. սեպտեմբերի 23-ին ընդունվեց այսպես կոչված «Ժելեզնովոդսկի կոմյունիկեն» («Համատեղ կոմյունիկե Ռուսաստանի Ղաշնության Նախագահ Բ.Ն. Ելցինի և Ղազախստանի Նախագահ Ն. Նազարբաևի միջնորդական առաքելության մասին»):

Ամերիկայի Միացյալ Նահանգների և միջազգային աջակցությամբ իրականացված 1991 թ. Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների միջնորդական առաքելությունը նշանավորեց հակամարտությունների կարգավորման գործում տարածաշրջանային և միջազգային համակարգի ձևավորումը, որը զարգացավ միջնորդ կողմերի ջանքերի հետագա փուլերում՝ արդեն այնպիսի միջազգային կազմակերպության շրջանակներում, ինչպիսին է ԵԱՀԿ-ն:

1992 թ. հունվարի 31-ը կարելի է համարել ելակետ, մինչ օրս ձգվող Ղարաբաղյան Հակամարտության գործում ԵԱՀԿ-ի միջազգային միջնորդական առաքելության համար: Այդ օրը ԵԱՀԿ-ի (1995 թ.-ից - ԵԱՀԿ) արտգործնախարարների Խորհրդի Պրագայի նիստը Հայաստանը և Աղբրեջանը ԵԱՀԿ-ի կազմի մեջ ընդգրկելուց հետո, որոշում կայացրեց այդ կազմակերպության գեկուցողին ուղարկել հակամարտության գոտի:

Լեռնային Ղարաբաղի Հակամարտությունը դարձավ ԵԱՀԿ-ի խաղաղարարական ներուժի առանցքային հիմնախնդիրներից մեկը: 1992 թ. փետրվարին, ԵԱՀԿ-ի Ավագ պաշտոնատար անձանց կոմիտեի (Ա-

ՊԱԿ) 7-րդ հանդիպման ժամանակ քննարկվեց Կազմակերպության դիտորդների առաքելության գեկույցը Լեռնային Ղարաբաղում իրավիճակի մասին: Ձեկույցի առաջարկություններից ելնելով, ԱՊԱԿ-ը հակամարտության մեջ ներգրավված կողմերին առաջարկեց ճակատում զինադադար հաստատել և ԵԱՀԿ-ի շրջանակներում բանակցություններ սկսել: Հակամարտության գոտում անվտանգության երաշխիքի համար առաջարկվում էր ԵԱՀԿ-ի Նախարարների Խորհրդի Նախագահի անձնական մասնակցությունը բանակցություններում: Հակամարտության սրումը ստիպեց ԱՊԱԿ-ին պնդել ԵԱՀԿ-ի Խորհրդի արտահերթ նիստի հրավիրման անհրաժեշտությունը, որը կայացավ 1992 թ. մարտի 24-ին Հրելսկիում: Այս նիստի ժամանակ որոշում կայացվեց հրավիրել միջնորդների առանձին խումբ՝ Մինսկի կոնֆերանսում Ղարաբաղյան Հակամարտության կարգավորման համընդհանուր բանակցությունների նախապատրաստման համար:

Երբ ԵԱՀԿ-ն նախաձեռնեց այն, ինչը հետագայում ստացավ Մինսկի գործընթաց անվանումը, նախատեսվում էր, որ Ղարաբաղյան Հակամարտության կարգավորման կոնֆերանսը տեղի կունենա 1993 թ. գարնանը Մինսկում՝ խաղաղ համաձայնագրի նախաձեռնման վերջնական մշակման նպատակով: ԵԱՀԿ-ն գտնուց մ.թ. որ կոնֆերանսին միայն կնձնա տեխնիկական պահերի ճշգրտումը, քանի որ հիմնական աշխատանքն արդեն կատարված էլինի նախապատրաստող մարմնի՝ Կազմակերպության Մինսկի խմբի կողմից: Այնուամենայնիվ, երբ հետզհետև սկսեցին նուրանոր հիմնախնդիրներ առաջանալ, դիվանագիտական նախապատրաստական մարմինը վերածվեց բանակցային ձևաչափի, իսկ ինքը՝ Մինսկի կոնֆերանսը հետաձգվեց անորոշ ժամկետով:

Այդ խմբի խնդիրը, որը հետագայում անվանվեց «Մինսկի խումբ», դարձավ հակամարտության խաղաղ կարգավորման նպատակով մշտական երկխոսությամբ և բանակցություններին աջակցելը: Դրա հետ մեկտեղ, ԱՊԱԿ-ը առաջարկեց ԵԱՀԿ-ի Նախարարների Խորհրդի Նախագահին հակամարտության գոտի առաքելություն ուղարկել զինադադարի ու այնտեղ դիտորդների տեղաբաշխման հնարավորությունների շուրջ բանակցությունների համար:

Ներկայումս Մինսկի խմբի մշտական անդամ երկրներ են հանդիսանում Ադրբեջանը, Չայնաստանը, Բելառուսը, Գերմանիան, Իտալիան, Ռուսաստանը, ԱՄՆ, Թուրքիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Եվեդիան և ԵԱՀԿ-ի «եռյակի» երկրները ռոտացիոն հիմքի վրա:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ինստիտուտը հիմնադրվել է ԵԱՀԿ Բուդապեշտի գագաթաժողովի որոշմամբ (6 դեկտեմբերի, 1994 թ): Մինսկի խմբի համանախագահների մանդատը ընդունվել է ԵԱՀԿ գործող նախագահի կողմից 1995 թ. մարտի 23-ին: Մինսկի խմբի համանախագահներ են դարձել Ռուսաստանը, ԱՄՆ և Ֆրանսիան:

Հիմնարկության գոտում ԵԱՀԿ-ի մշտական ներկայացուցիչը, որի գլխավոր գործառույթներից մեկը զինադադարի ռեժիմի պահպանմանն ենթադրվում էր դիտորդական առաքելության իրականացումն է, հանդիսանում է ԵԱՀԿ-ի Գործող նախագահի Անձնակազմի ներկայացուցիչը:

1992 թ. մարտի 24-ին, ԵԱՀԿ-ի խորհրդի նիստում հաստատված որոշումների մոտեցումներն ու սկզբունքները զարգացում ապրեցին Ղարաբաղյան Հանրապետության շուրջ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի չորս բանաձևերում (1993 թ. ապրիլից մինչև Մայիսի 11-ին ընդունվել է 1994 թ. դեկտեմբերին կայացած ԵԱՀԿ անդամ երկրների ղեկավարների ու կառավարությունների գագաթաժողովում (Բուդապեշտ, Յունայթեդ Նեյշնս):

Իր բանաձևերում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը անհավաստություն է հայտնում մարտական գործողությունների շարունակման, ԼՂՀ-ի հարակից տարածքների զավթման, բնակչության զանգվածային տեղաշարժերի և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շրջափակման առիթով՝ հակամարտության կողմերին կոչ անելով դադարեցնել մարտական ու փոխադարձ թշնամակն այլ գործողությունները և վերակսել բանակցությունները Մինսկի խմբի շրջանակներում:

1992 թ. մարտի 26-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ձևակերպեց Ղարաբաղյան Հանրապետության կարգավորման մեջ իր մասնակցության ձևը: Այն է, աջակցությունը ԵԱՀԿ-ի խաղաղարար ջանքերին: Այսպիսով, այդ պահից սկսած և մինչ օրս, ՄԱԿ-ը ձեռնարկ է մտնում հակամարտության կարգավորման գործընթացի ուղղակի մասնակցությունից: Այնուամենայնիվ, Ադրբեջանի մատուցմամբ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի վերջին որոշ նախաձեռնությունները (2008 թ. մարտի 14-ին ընդունված բանաձևը «Իրավիճակը Ադրբեջանի զավթված տարածքներում» մասին,

որին դեմ հանդես եկան ԵԱՀԿ Մինսկի խմբի բոլոր երեք համանախագահող երկրները), հարցակազմի տակ են դնում հակամարտության կարգավորման արդյունավետ ուղիների որոնման ամբողջ գործընթացը:

1992 թ. սկսած իրականությունը դարձան հակամարտության հիմնական կողմերի՝ ի դեմս Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև անմիջական շփումները, ընդ որում ոչ միայն հակամարտության կարգավորման շուրջ պաշտոնատարների պաշտոնական շփումների ոլորտում, այլ նաև միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների օգնությամբ՝ փոխադարձ վստահելիության հաստատման ոլորտում (հիմնականում Կարմիր խաչի Միջազգային Կոմիտեի):

1992-1993 թթ. նշանավորվեցին միջորդների միջև համագործակցության սերտ ձևերի, ինչպես նաև Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի (Հայաստանի, Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի պաշտոնական ներկայացուցիչների երկկողմ և եռակողմ բանակցությունների ներդրմանը:

Նման համագործակցության առավել նշանակալի արդյունքը հանդիսացավ զինադադարի մասին պլեյի քան մեկնակես տասնյակ պայմանավորվածությունների ձեռքբերումը: Դրանցից ամենահայտնիներն են. 1992 թ. մայիսին Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև Թեհրանում (Իրան), 1992 թ. սեպտեմբերին Մոսկվայում հակամարտության կողմերի ռազմական գերատեսչությունների ղեկավարների միջև ձեռք բերված պայմանավորվածությունները զինադադարի մասին, ինչպես նաև 1993 թ. սեպտեմբերի 12-13-ին Ադրբեջանական խորհրդարանի փոխխոսնակի ու ԼՂՀ-ի արտգործնախարարի միջև բանակցություններ ընթացքում ընդունած Համատեղ կոմյունիկեյն (միայն 1993 թ. Ադրբեջանը պլեյի քան 10 անգամ ուղղակի շփման մեջ է մտել ԼՂՀ իշխանությունների հետ և պայմանավորվել զինադադարի մասին):

ԵԱՀԿ Լիսաբոնում կայացած գագաթաժողովից հետո (1996 թ. դեկտեմբեր, Պորտուգալիա) անմիջական եռակողմ բանակցություններում ճգնաժամ նկատվեց, որը պայմանավորված էր առանցքային հարցերի, հիմնարար սկզբունքների, ինչպես նաև հակամարտության կարգավորման հանընդհանուր մոդելի շուրջ հակամարտության կողմերի միջև տարամայնություններով:

ԵԱԿԿ-ի Մինսկի խմբի համաձայնագրահների միջնորդությամբ, հավանարության կարգավորման եռակողմ ձևաչափով վերջին հանդիպումը (Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ, Հայաստան) կայացավ Գելսինկիում 1997 թ. ապրիլի 1-ից 4-ը:

1997 թ. մայիսից մինչև 1998 թ. նոյեմբերը ԵԱԿԿ Մինսկի խմբի համաձայնագրահ երկրները կողմնորոն երեք անգամ Ղարաբաղյան Հակամարտության կարգավորման նոր առաջարկություններ են ներկայացրել: Մինսկի խմբի առաջին երկու պլանները ընդունվել են Ադրբեջանի և Հայաստանի կողմից, սակայն մերժվել են Լեռնային Ղարաբաղի կողմից: Երրորդ առաջարկությունը, որի հիմքում դրված էր «ընդհանուր պետության» հայեցակարգը, և որը նախատեսում էր հիմնախնդրի համընդհանուր կարգավորումը՝ առանց նախապայմանների բանակցությունների վերսկսման ճանապարհով, և Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին տալիս էր իր ինքնորոշման իրավունքը իրականացնելու հնարավորություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը ընդունեցին, իսկ Ադրբեջանի Հանրապետությունը մերժեց:

1997 և 1999 թվականների միջև ընկած հատվածում, Մինսկի խմբի միջնորդական առաքելության շրջանակներում քննարկվում էին չորս տարբերակներ, որոնք ներկայացնում էին հակամարտության կարգավորման տարբեր մեթոդներ:

Առաջինը, որը հայտնի է «փաթեթային տարբերակ» անվամբ, ենթադրում էր բոլոր հիմնախնդիրների միաժամանակյա լուծում՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը: Հաջվի առնելով խնդրահարույց հարցերի բանակը, նման մոտեցումը ավելի շատ հնարավորություններ էր տալիս փոխզիջման ձեռքբերման համար: Փաթեթային առաջարկը, որն առաջ էր քաշվել համաձայնագրահների կողմից 1997 թ. մայիս-հուլիս ամիսներին, կազմված էր երկու օրակարգից. հակամարտության դադարեցման «Թիվ 1 Համաձայնագիրը», որը ներառում էր զորքերի դուրս բերումը, խաղաղության պահպանման ուժերի տեղաբաշխումը, տեղահանված անձանց վերադարձը և անվտանգության հարցերը, և Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի «Թիվ 2 Համաձայնագիրը»: Ինչպես ասվում էր ԵԱԿԿ նախարարների խորհրդի 1997 թ. հաշվետվության մեջ, դրանք երկու առանձին օրակարգեր էին, «որպեսզի կողմերին պայմանավորվելու և առանձին ժամկետներում դրանցից յու-

րաբանչյուրն իրականացնելու հնարավորություն տրվեր, սակայն այն բանի հստակ գիտակցմամբ, որ վերջին հաշվով բոլոր մնացած հարցերը պետք է լուծում ստանան»: Բացվի և Երևանի արձագանքը դրական էր, սակայն Ստեփանակերտը մերժեց այդ առաջարկը:

Այսպես կոչված «փուլային լուծումը», որն առաջարկվել էր 1997 թ. սեպտեմբերին, հիմնվում էր «Թիվ 1 Համաձայնագրի» առաջնահերթ ստորագրման վրա, մինչև «Թիվ 2 Համաձայնագրի» քննարկումը, ընդ որում Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը միացնող Լաչինի միջանցքի հարցը տեղափոխվել էր «Թիվ 2 Համաձայնագրի» մեջ: Ենթադրվում էր, որ Լեռնային Ղարաբաղը կպահպանի ներկայիս կառուցվածքը այնքան ժամանակ, քանի դեռ ձեռք չի բերվել համաձայնություն նրա վերջնական կարգավիճակի մասին: Մինչ այդ նրան կտրամադրվի միջազգայնորեն ճանաչված «միջանկյալ կարգավիճակ»: Այս պլանը մերժվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարության կողմից՝ հերթական անգամ ցուցադրելով այն, որ չնայած բանակցությունների ընթացքում նրան հատկացված սահմանափակ կարգավիճակին, պաշտոնական Ստեփանակերտը կարգավորման հավանական տարբերակների նկատմամբ օժտված է վետոյի զգալի իրավունքով:

1998 թ. նոյեմբերին առաջ քաշված «Ընդհանուր պետության» տարբերակը իրենից ներկայացնում էր Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ընդհանուր պետության բավական հեղիեղուկ մոդել՝ Բացվի և Ստեփանակերտի միջև քիչ թե շատ հորիզոնական հարաբերություններով: Այս տարբերակը մերժվեց Ադրբեջանի կողմից՝ նրա տարածքային ամբողջականության սկզբունքի, ինչպես նաև 1996 թ. դեկտեմբերին Լիաթբումու կայացած ԵԱԿԿ-ի զգալի քառաժողովի կողմից համաձայնեցված սկզբունքների խախտման պատճառով, երբ՝ բացառությամբ Հայաստանի, բոլոր մասնակիցները սատարեցին Ադրբեջանի տարածքային ամբողջականության գերակայությունը ընդգծող կարգավորման հայտարարությունը:

2000 թ. վերջից հակամարտության կարգավորման գործընթացի օրակարգում առաջ քաշվեց Հայաստանի և Ադրբեջանի միջև բարձր մակարդակով հանդիպումների սխեման, որոնց նախորդեցին այդ պետությունների արտգործնախարարների նախապատրաստական համընդհանուրները: Ենթադրվում էր, որ տվյալ սխեման ուղղված է Ղարաբաղյան Հակամարտության համընդհանուր կարգավորման ձեռքբերմանը:

Դեռևս այս սխեման էր գտնվում Փարիզում Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի մասնակցությամբ կայացած Հայաստանի և Ադրբեջանի նախագահների զրույցների կենտրոնում (2001 թ. հունվար և մարտ ամիս-

ներ): Ավելի ուշ, 2001 թ. ապրիլի 3-6-ին Քի-Ռեստուոն (Ֆլորիդա, ԱՄՆ) «երկու+երեք» ձևաչափով անցկացվեց Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև բանակցությունների հերթական ռաունդը, եւՄՀ ԱՖինսկի խմբի համանախագահ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ:

2001 թ. միջնորդական երկակը՝ ի դեմս Ֆրանսիայի և ԱՄՆ-ի, առաջարկեց կարգավորման արդիականացված տարբերակ, որն իր մեջ համատեղում էր նախկինում առաջարկված մոդելների տարրեր՝ «Գոբլի ծրագրի» հետ (կարգավորման ծրագիր, որը նախատեսում է հակամարտության կողմերի միջև տարածքների փոխանակում): Կարգավորման տվյալ մոդելը առաջարկվեց Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև Քի-Ռեստուոն 2001 թ. ապրիլին կայացած հանդիպման ժամանակ, սակայն չհանգեցրեց կողմերի համաձայնությանը:

Երկու նախագահների միջև 2002 թ. օգոստոսին, հոկտեմբերին և նոյեմբերին կայացած հանդիպումները համաձայնության չհանգեցրին:

Սկսած 2003 թ. Ադրբեջանի նոր նախագահը վերադարձած այսպես կոչված կարգավորման փուլային տարբերակին՝ սկսելով «ադրբեջանական տարածքներից» հայկական զորքերի դուրս բերումից և ավարտելով Լեռնային Ղարաբաղին «Ադրբեջանի կազմում ամենալայն ինքնավարության տրամադրումով»:

2004 թ. ապրիլի 16-ին Մինսկի խմբի համանախագահներին Պրահայում (Չեխիա) Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հետ հաջողվեց անցկացնել համապատասխան խորհրդակցություններ: Համընդհանուր կարգավորման տարբերակի որոնման շուրջ հակամարտության կողմերի միջև ակտիվ խորհրդակցությունների վերսկսման այս նոր փուլը ստացավ «Պրահայի գործընթաց» անվանումը:

2004 թ. ապրիլի 28-ին Վարշավայում կայացած հանդիպման ժամանակ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարներին հանձնարարեցին շարունակել համանախագահների հետ խորհրդակցությունները:

2005 թ. մարտից մինչև մայիս, համանախագահները մի քանի առանձին խորհրդակցություններ անցկացրին արտգործնախարարների հետ՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հերթական հանդիպման նախապատրաստման նպատակով, որը կայացավ 2005 թ. մայիսի

15-ին Վարշավայում՝ Ռուսաստանի և Ֆրանսիայի արտգործնախարարների մասնակցությամբ:

2006 թ. մայիսին, Ռամբոյեյում (Ֆրանսիա) Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների զագաթաժողովում հերթական նախաձեռնությունների ձևախղումից և Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչների հանդիպումից հետո, Մինսկի խմբի համանախագահները հայտարարեցին, որ չկա բանակցությունների ինտենսիվացման անհրաժեշտություն, և որ սպասվել է նրանց երևակայությունը բանակցությունների շարունակման բոլոր հնարավոր տեսակների ու սկզբունքների շուրջ:

Այնուհետև հակամարտության կարգավորման եՄՀ ԱՖինսկի խմբի միջնորդական առաքելության հովանավորությամբ ընթացող քննարկումները շարունակվեցին այսպես կոչված «Մադրիդյան սկզբունքների» շրջանակներում: 2007 թ. նոյեմբերին եՄՀ ԱՖինսկի խմբի համանախագահները Մադրիդում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների քննարկմանը ներկայացրեցին Ղարաբաղյան Հակամարտության խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքները:

2008 թ. նոյեմբերի 2-ին, Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահները Մոսկվայում համատեղ շոշափակի ստորագրեցին, որի կետերից մեկում «հաստատվում էր եՄՀ ԱՖինսկի խմբի համանախագահների կողմից միջնորդական ջանքերի շարունակման կարևոր նշանակությունը՝ հաշվի առնելով 2007 թ. նոյեմբերի 29-ին Մադրիդում կայացած նրանց հանդիպումը կողմերի հետ և քաղաքական կարգավորման հիմնական սկզբունքների մշակման նպատակով հետագա քննարկումները»: Համաձայն Ղոչակագրի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահները պայմանավորվել են շարունակել աշխատանքները Ղարաբաղյան Հակամարտության քաղաքական կարգավորման համաձայնությունների շուրջ, այդ թվում նաև բարձր մակարդակով անցկացվող հետազոտ չվումների ընթացքում, ինչպես նաև իրենց երկրների արտգործնախարարներին հանձնարարել են ակտիվացնել եՄՀ ԱՖինսկի խմբի համանախագահների հետ փոխգործակցության ուղղությամբ բանակցային գործընթացի հետագա քայլերը:

Հակամարտության կարգավորման շուրջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիրքորոշումն այն է, որ ձեռք բերված պայմանավորվածությունները առաջին հերթին պետք է լուծեն այն հարցերը, որոնք վերաբերվում են հակամարտության պատճառներին (Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակը և նրա անվտանգությունը),

հետո միայն այն հարցերին, որոնք կապված են հակամարտության հետևանքների հետ (վերահսկվող տարածքներ, փախստականներ, կոմունիկացիաների վերականգնում և այլն): Գրատապ անհրաժեշտություն կա մտտ ավագայում ԵԱԳԿ Մինսկի խմբի հովանու ներքո ԼՂԳ-ի պարտադիր մասնակցությամբ, լայն ձևաչափով բանակցությունների վերսկսման մեջ:

Հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում արդեն բավական երկար ժամանակ գոյություն ունեցող հիմնականում մեծամասամբ բացատրվում է նրանով, որ Լեռնային Ղարաբաղի Զանրապետությունը շարունակում է դե-յուրե մնալ հակամարտության կողմ, սակայն դե-ֆակտո մեկուսացված է ԵԱԳԿ Մինսկի խմբի շրջանակներում բանակցային գործընթացին մասնակցելուց:

Ներկայիս փուլում լիարժեք բանակցությունների հակակցությունն ինքնին բացակայում է: Բանակցությունների այն ձևաչափը, որում մասնակցում են միայն Զայաստանը և Ադրբեյջանը, հանդիսանում է ԵԱԳԿ-ի կողմից 1994 թ. դեկտեմբերին Բուլղապեշտի գազաթաժողովի ընդունած պաշտոնական որոշումների և 1995 թ. մարտի 31-ին ԵԱԳԿ-ի Գործող նախագահի կողմից Պրահայում հակամարտության երեք կողմերի մասին արված անփոփման խախտումներ և ամենևին չի արտացոլում հակամարտության էությունը, որի հիմնական կողմերն են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Զանրապետությունը և Ադրբեյջանի Զանրապետությունը: Առանց Լեռնային Ղարաբաղի Զանրապետության ճանաչման և կարգավորման գործընթացում նրա ամբողջական մասնակցության, ինչը ներկայիս քննարկումներին կհաղորդի լիարժեք բանակցությունների տեսք, հնարավոր չէ Ղարաբաղյան Հակամարտության հիմնախնդրի լուծումը:

Լեռնային Ղարաբաղի Զանրապետության պետականության կառուցումը

- պետական իշխանության մարմինների կայացումը

Հռչակման օրվանից Լեռնային Ղարաբաղի Զանրապետությունում սկսվեց պետական իշխանության մարմինների ձևավորման գործընթացը: Սկզբնապես Զանրապետությունը ընթացավ իշխանական կառույցների ժողովրդավարական ձևավորման ճանապարհով՝ իշխանության օ-

րենսդիր, գործադիր ու դատական ճյուղերի բաժանման սկզբունքի հիման վրա: Հռչակված Լեռնային Ղարաբաղի Զանրապետության դեմ Ադրբեյջանի Զանրապետության կողմից սկսված ռազմական գործողությունները իրենց բնական շտկումները մտցրեցին Լեռնային Ղարաբաղի պետական իշխանության ճյուղերի գործունեության մեջ՝ հաշվի առնելով պատերազմական իրավիճակը և Զանրապետության հայ ժողովրդի գլխին կախված ֆիզիկական ոչնչացման սպառնալիքը:

Օրենսդիր իշխանությունը

1991 թ. դեկտեմբերի 28-ին՝ համաձայն «Լեռնային Ղարաբաղի Զանրապետության ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին» ժամանակավոր դրույթի, Զանրապետությունում անցկացվեցին առաջին զուևարման Գերագույն խորհրդի (խորհրդարան) ընտրությունները: Ձևավորվեցին 81 ընտրական շրջաններ և 214 ընտրական տեղամասեր: Ընտրություններն անցկացվեցին մեծամասնական ընտրական համակարգով՝ համընդհանուր, հավասար և գաղտնի քվեարկությամբ: Զանրապետության առաջին զուևարման Գերագույն խորհուրդը ընտրվեցին 81 պատգամավորներ:

Արդյունքում ձևավորվեց Զանրապետության պետական իշխանության Գերագույն մարմինը – Լեռնային Ղարաբաղի Զանրապետության Գերագույն խորհուրդը: Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը բացվեց 1992 թ. հունվարի 6-ին: Նստաշրջանում ընտրվեցին Գերագույն խորհրդի Նախագահը, նախագահի տեղակալը, ինչպես նաև ձևավորվեց խորհրդարանի վարչական-ապարատը: Նստաշրջանում ձևավորվեց նաև Լեռնային Ղարաբաղի Զանրապետության առաջին Կառավարությունը (ԼԳԳ Նախարարների խորհուրդը):

1995 թ. ապրիլի 30-ին տեղի ունեցան Լեռնային Ղարաբաղի Զանրապետության Գերագույն խորհրդի նոր ընտրությունները: Ձևավորվեցին 33 ընտրական շրջաններ: Ընտրություններին մասնակցեց ընտրողների 73,9 տոկոսը: Ընտրությունների առաջին փուլի արդյունքում Զանրապետության խորհրդարան ընտրվեցին 33 պատգամավորներ: Ընտրություններին ներկա էին միջազգային անկախ դիտորդներ:

1996 թ. մարտի 19-ին Զանրապետության երկրորդ զուևարման Գերագույն խորհուրդը վերանվանվեց Լեռնային Ղարաբաղի Զանրապետության Ազգային ժողով:

2000 թ. հունիսի 18-ին անցկացվեցին ԼՂՀ-ի խորհրդարանական հերթական ընտրությունները: Ձևավորվեցին 33 ընտրական շրջաններ: Բոլոր շրջաններում ընտրությունները տեղի ունեցան մեկ փուլով: Խորհրդարան ընտրվեցին 33 պատգամավորներ: Ընտրություններին մասնակցեցին ընտրական իրավունք ունեցող ամձանց ընդհանուր թվի 59,7 տոկոս քաղաքացիները: Ընտրություններին ներկա էին միջազգային անկախ դիտորդները, որոնք այցելել էին 170 ընտրական տեղամասեր և մասնակցել էին ձայների հաշվմանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի վերջին ընտրությունները անցկացվեցին 2005 թ. հունիսի 19-ին: Առաջին անգամ Հանրապետության խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին մեծամասնական-համամասնական խառը ընտրական համակարգով: Համամասնական համակարգով առաջին երեք տեղերը զբաղեցրեցին Ռշխանամետ «Արցախի ժողովրդավարական կուսակցությունը», «ՀՅԴ Դաշնակցություն» - «Շարժում-88» դաշինքը և «Ազատ Զայրենիք» կուսակցությունը: Մեծամասնական ընտրակարգով Հանրապետության խորհրդարան ընրվեցին ինչպես կուսակցությունների թեկնածուներ, այնպես էլ անկախ, անկուսակցական թեկնածուներ:

Ընտրությունների ընթացքին հետևում էին միջազգային 117 դիտորդներ, այդ թվում Հայաստանից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Հունաստանից, Չեխիայից, Խորվաթիայից, Իրանից, Իսրայելից: Ըստ դիտորդների գնահատականի, ընտրություններն ընդհանուր առմամբ անցել էին ազատ և թափանցիկ ընտրությունների անցկացման ժողովրդավարական ստանդարտներին համապատասխան:

Գործադիր իշխանություն

Ադրբեջանի Հանրապետության կողմից լայնամասշտաբ ռազմական ագրեսիային դիմակայելու համար, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ներուժի կենտրոնացման նպատակով (1992 թ. ամռանը գործնականում ԼՂՀ-ի ամբողջ տարածքի կեսը զավթված էր Ադրբեջանի զինված ուժերի կողմից՝ ամբողջ Շահումյանի շրջանը, Սարղսկերտի շրջանի մեծ մասը, Ասկերանի, Յադրուբի և Մարտունու շրջանների մի մասը), ինչպես նաև հիմնվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից օգոստոսին ընդունված որոշման վրա, Հանրապետությունում մտցվեց ռազմական դրուբ-

յուն և ձևավորվեց Պաշտպանության պետական կոմիտեն (ՊԴԿ): Հաշվի առնելով պատերազմական իրավիճակը, օրենսդիր և գործադիր իշխանությունների իրավասությունները վերանայվեցին. գործադիր իշխանությունը ԼՂՀ կառավարությունից (Նախարարների խորհրդից) փոխանցվեց ՊԴԿ-ին, ԼՂՀ Գերագույն խորհուրդը մնաց Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը:

1994 թ. մայիսի զինադադարի համաձայնագրի կնքումից հետո Հանրապետության Գերագույն խորհուրդը կասեցրեց ՊԴԿ-ի գործունեությունը և ընդունեց օրենք «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի մասին»: ԼՂՀ-ում ներդրվեց նախագահի ինստիտուտը:

1994 թ. դեկտեմբերին Հանրապետության Գերագույն խորհուրդն ընտրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին Նախագահին:

1996 թ. նոյեմբերի 24-ին, ԼՂՀ-ում անցկացվեցին Հանրապետության Նախագահի ուղիղ, համաժողովրդական ընտրությունները: Ընտրություններին մասնակցեցին 70052 մարդ կամ ընդհանուր ընտրողների թվի (89733 մարդ) 78,07 տոկոսը: Ընտրություններին ներկա էին միջազգային անկախ դիտորդներ:

Կապված այն բանի հետ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահն ավելի ուշ զբաղեցրեց Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը, 1997 թ. մարտին, ԼՂՀ-ի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարեց Հանրապետությունում վաղաժամկետ նախագահական ընտրությունների անցկացման մասին: Ընտրություններին մասնակցեցին 76257 մարդ կամ ընդհանուր ընտրողների թվի (90137 մարդ) 84,6 տոկոսը: Ընտրություններին ներկա էին անկախ դիտորդներ Ռուսաստանից, Ֆրանսիայից, Եվրոյանիայից, Ուկրաինայից:

2002 թ. օգոստոսի 11-ին, ԼՂՀ-ում կայացան թվով երրորդ նախագահական ընտրությունները: Ընտրություններին մասնակցեցին 64736 մարդ, որը կազմեց ընդհանուր ընտրողների թվի (85523 մարդ) 75,7 տոկոսը: Ընտրությունների ընթացքին հետևում էին միջազգային 116 դիտորդներ և լրագրողներ Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Հայաստանից և այլ երկրներից:

2007 թ. հուլիսի 19-ին Հանրապետությունում անցկացվեցին չորրորդ նախագահական ընտրությունները: Ընտրություններում քվեարկե-

ցին 70325 ընտրողներ, որը կազմեց ընտրական իրավունք ունեցող ԼՂՀ բաղաբաղցիների ընդհանուր թվի (92117 մարդ) 76,25 տոկոսը:

Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Նախագահի ընտրությունների ընթացքի կարճաժամկետ դիտարկման արդյունքում միջազգային (արտասահմանյան) դիտորդների խմբի եզրակացությունն էր. «Մենք, միջազգային (արտասահմանյան) դիտորդներս, որոնք ներկայացնում են եվրոպական տարբեր երկրների կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններ, միջազգային կազմակերպություններ, միավորեցինք մեր ջանքերը 2007 թ. հուլիսի 19-ին կայացած Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Նախագահի ընտրությունների անցկացման նկատմամբ միջազգային դիտորդական առաքելության կազմակերպման համար՝ համաշխարհային լայն հանրությանը ժողովրդավարական վերափոխումների հետ կապված ԼՂՀ-ում տիրող իրական վիճակի մասին տեղեկացնելու նպատակով, ինչպես նաև համաշխարհային լավագույն պրակտիկային ընտրական գործառնությունների համապատասխանեցում հարցերում ընտրությունների կազմակերպիչներին աջակցություն ցուցաբերելու համար: Մեր գործունեության մեջ մենք առաջնորդվում էինք օբյեկտիվության, թափանցիկության, արդարության և անկողմնակալության սկզբունքներով, որոնք ամրագրված են 2005 թ. Միացյալ Ազգերի Կազմակերպության կողմից ընդունված Միջազգային դիտորդների վարքի կոդեքսում, Եվրոպայի խորհրդի Կենտրոնի համեմատման առաջարկություններում, ինչպես նաև այլ միջազգային-իրավական ակտերում: Միջազգային առաքելության իրականացման նախապատրաստման, պահանջմունքի գնահատման, առաքելության կազմի քանակի ու մասնակիցների, ինչպես նաև ԼՂՀ-ի տարածքում նրա գտնվելու ժամկետների որոշման ժամանակ մենք ելել ենք հետևյալից. — Լեռնային Ղարաբաղի Յանրապետության ընտրական օրենսդրության վերլուծությունը ցույց տվեց բաղաբաղցիների ընտրական իրավունքների երաշխիքների ապահովման բավարար աստիճան՝ ազատ, պարբերական, պարտադիր, արդար, իրական և թափանցիկ ընտրություններին մասնակցելու միջազգային սկզբունքներին համապատասխան, - Յանրապետությունում գործող հասարակական ու քաղաքական միավորումների սպեկտրը, ինչպես նաև ընտրությունների ընթացքում Յանրապետությունում արտասահմանյան դիտորդների ներկայության երաշխավորված հնարավորությունը ապահովում են ընտրությունների ընթացքի գործուն հասարակական ու անկողմնակալ դիտումը... Ազատ ընտրությունների սկզբունքին համապատասխան, առանց որևէ բռնության կամ այլ անօրինական ազդեցության կիրառման սպառնալիքի, ընտրողների համար ապահովված էր

կատարելու իրենց ընտրությունը ընտրություններին մասնակցելու կամ չմասնակցելու կապակցությամբ՝ չվախենալով որևէ պատիժ, ազդեցությունից, պարտադրումից, այդ թվում անկախ քվեարկության անփոփոխից և ընտրությունների արդյունքներից: Ընտրություններն անցնում էին այլընտրանքային հիմունքների վրա. քվեաթերթիկներում ընդգրկված էին հինգ թեկնածուներ: Միջազգային դիտորդների կողմից այցելած ոչ մի տեղամասում չեն բացահայտվել ընտրական համեմատողական աշխատանքներին միջամտելու փորձեր վարչական կամ իրավապահ մարմինների կողմից: Ոչ մի դիտորդի չի մերժվել քվեարկության գործընթացի մասին տեղեկատվություն ստանալու հարցում: Միջազգային դիտորդները չեն բացահայտել ընտրողների վրա ճնշման ու ահաբեկման դեպքեր: Քվեարկության ընթացակարգը լիովին իրականացվում էր Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Ընտրական Կոդեքսին համապատասխան... Միջազգային (արտասահմանյան) դիտորդների կողմից նշված դիտողություններն ու խախտումները ընդհանուր առմամբ չեն ազդել Լեռնային Ղարաբաղի Յանրապետության ժողովրդի ազատ կամքի վրա և թույլ են տալիս բավական հավաստիորեն հաստատել 2007 թ. հուլիսի 19-ի ընտրությունների արդյունքները: Իրականացված դիտման հիման վրա միջազգային (արտասահմանյան) դիտորդները հանգել են ընդհանուր եզրակացության այն մասին, որ 2007 թ. հուլիսի 19-ին անցկացված Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Նախագահի ընտրությունները համապատասխանել են ժողովրդավարական ընտրությունների կազմակերպման ու անցկացման ազգային օրենսդրությանը, միջազգային համընդհանուր սկզբունքներին ու նորերին»:

ԼՂՀ առաջին կառավարությունը ձևավորվել է առաջին գումարման խորհրդարանով և իրականացրել է իր իրավասությունները 1992 թ. հունվարից մինչև օգոստոս: Կառավարության տվյալ կազմի իրաժարականից հետո, Յանրապետության Գերագույն խորհրդի որոշմամբ, ձևավորվեց ԼՂՀ-ի Պաշտպանության պետական կոմիտեն, որը Յանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից ստացավ գործադիր իշխանության կոլեգիալ մարմնի իրավասություններ: Կոմիտեն իր գործառնությունները իրականացրեց 1992 թ. օգոստոսից մինչև 1995 թ. հունվարը: 1995 թ. փետրվարին ընդունվեց և ուժի մեջ մտավ ԼՂՀ օրենքը «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Կառավարության մասին»:

Նշված օրենքին համապատասխան, ԼՂՀ նախագահը ձևավորում է Հանրապետության գործադիր իշխանությունը: 1995 թ. մինչև 2005 թ. ձևավորվել են ԼՂՀ-ի չորս կառավարություններ:

Հանրապետությունում 2007 թ. նախագահական ընտրություններին հետո ձևավորվեց ԼՂՀ կառավարության նոր կազմը:

Պատական իշխանությունը

Պատահական բարեփոխումների իրականացման համար 1999-2000 թթ. ԼՂՀ-ում ընդունվել է օրենսդրական ակտերի մի փաթեթ, որը համապատասխանում է ժողովրդավարական պետությունների միջազգային ստանդարտներին:

Նոր դատաիրավական համակարգը սկսեց գործել 2002 թ. փետրվարից, երբ Ազգային ժողովը օրենքներ ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն Պատարանի և Առաջին ատյանի դատաիրավական մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոր քաղաքացիական կոդեքսը ուժի մեջ մտնելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոր Քրեական կոդեքսի կիրառման մասին»:

- պետական իշխանության համակարգը

2006 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության ընդունումից հետո, Հանրապետության պետական իշխանության համակարգը շարունակեց իր զարգացումը իշխանության տարանջատման սկզբունքի խորացման ու ժողովրդավարացման ուղիով:

Սահմանադրական հանրաքվեի ԼՂՀ Կենտրոնական հանձնաժողովը ամրագրել է հետևյալ արդյունքները. հանրաքվեին մասնակցության իրավունք ունեցող քաղաքացիները ընդհանուր թիվը կազմել է 90077 մարդ, գրանցված և քվեաթերթիկ ստացած ընտրողների թիվը՝ 78389 մարդ, Սահմանադրության նախագծին կողմ քվեարկածների թիվը՝ 77279, դեմ քվեարկողների թիվը՝ 554: Այսպիսով, քվեարկության ընդհանուր մասնակիցների շուրջ 99 տոկոսը կողմ է քվեարկել Հանրապետության Սահմանադրության նախագծին: Ընտրությունների ընթացքին հետևում էին ավելի քան 100 միջազգային դիտորդներ, այդ թվում նաև Հայաստանից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իտալիայից, Դանիայից, Խորվաթիայից, Իսրայելից, Ուկրաինայից: Համաձայն միջազգային դիտորդներ

րի կողմից ներկայացված հաշվետվության. «...2006 թ. դեկտեմբերի 10-ին անցկացված Սահմանադրական հանրաքվեն համապատասխանում է ԵԱՀԿ, Եվրոպայի Խորհրդի և այլ եվրոպական ու միջազգային կառույցների կողմից ժողովրդավարական ընտրությունների հավասարապես նաև հանրաքվեի, ցկատմանը դրված ստանդարտների մեծամասնությամբ»:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը – սուվերեն, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է, որտեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Հանրապետությունում պետական իշխանության համակարգը հիմնված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման ու հավասարակշռման սկզբունքների վրա, ինչպես նաև իշխանության հանրապետական ու տեղական մարմինների իրավասությունների սահմանափակման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Իր իշխանությունը ժողովուրդը իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ և պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց մասին օրենքներով նախատեսված ուղիներով:

Պետությունը ղեկավարը հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը, որն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Մինևույն անձը չի կարող զբաղեցնել երկրի նախագահի պաշտոնը հաջորդաբար երկու ժամկետից ավելի:

Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ավափում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

Հանրապետության նախագահը հանդիսանում է ԼՂՀ-ի սուվերենության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ձիմված Ուժերի Գերագույն Հրամանատարը, երկրի պաշտպանության ոլորտում կորողիանցնում է պետական մարմինների գործունեությունը:

Նախագահը Հանրապետությունը ներկայացնում է միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը:

Օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Յանապետության Ազգային ժողովը, որն ընտրվում է հինգ տարի ժամկետով:

Ազգային ժողովը ընդունում է օրենքներ, որոշումներ, հայտարարություններ և դիմումներ:

Յանապետության Նախագահի առջարկությամբ ԼՂՅ Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ դադարեցնում է ԼՂՅ-ի միջազգային պայմանագրերը, որոշում է կայացնում պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին, ԼՂՅ-ի Սահմանադրության և օրենսդրական ակտերին համապատասխան իրականացնում է այլ իրավասություններ:

Ազգային ժողովը կազմված է 33 պատգամավորներից: Պատգամավորների 2/3-ը ընտրվում են մեծամասնական հիմունքներով, իսկ 1/3-ը՝ կուսակցական ցուցակներով: Ազգային ժողովի պատգամավորների թվից ստեղծվում են ֆրակցիաներ, պատգամավորական խմբեր:

ԼՂՅ-ի ներկայիս խորհրդարանում գործում են 6 մշտական հանձնաժողովներ. արտաքին հարաբերությունների, արտադրության և արտադրական ենթակառուցվածքի հարցերի, ֆինանսների, բյուջեի և տնտեսական կառավարման հարցերի, պետաիրավական հարցերի, սոցիալական ոլորտի հարցերի, պաշտպանության, անվտանգության և օրինակաւնության հարցերի, - և երեք ֆրակցիաներ. «ժողովրդավարություն», որը կազմված է «Արցախի ժողովրդավարական կուսակցության» անդամներից, «Յայրենիք» կազմված «Ազատ Յայրենիք» կուսակցության անդամներից և «ՅՅ Դաշնակցություն - Շարժում-88» կազմված ՅՅԴ-Շարժում-88 դաշինքի ներկայացուցիչներից:

Յանապետության բարձրագույն գործադիր մարմինը Լեռնային Ղարաբաղի Յանապետության Կառավարությունն է: Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետից և նախարարներից:

Կառավարության միստերը հրավիրում և վարում է վարչապետը: Նիստերը կարող է հրավիրել և վարել նաև Յանապետության նախագահը: Կառավարությունը ընդունում է որոշումներ, որոնք ստորագրում և հրապարակում է վարչապետը: Կառավարության որոշմամբ նշանակվում և ազատվում են հանրապետության վարչակազմերի ղեկավարները՝ բացառությամբ Ստեփանակերտի քաղաքապետի, որն ընտրովի պաշտոն է:

ԼՂՅ-ի ներկայիս կառավարությունն ունի հետևյալ կառուցվածքը. առողջապահության նախարարություն, արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, գյուղատնտեսության նախարարություն, կրթության և գիտության նախարարություն, մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարություն, պաշտպանության նախարարություն, սոցիալական ապահովության նախարարություն, տնտեսական զարգացման նախարարություն, քաղաքաշինության նախարարություն, ֆինանսների նախարարություն, կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար:

ԼՂՅ-ի կառավարության առընթեր գործում են պետական կառավարման հետևյալ մարմինները. ազգային անվտանգության ծառայությունը, անշարժ գույքի և կադաստրի պետական կոմիտեն, արտադրական ենթակառուցվածքների վարչությունը, զբոսաշրջության վարչությունը, կապիտալ շինարարության վարչությունը, պետական հարկային ծառայությունը, շրջակա միջավայրի և բնական պաշարների վարչությունը, ԼՂՅ-ի ոստիկանությունը, ջրային տնտեսության վարչությունը, սպորտի պետական կոմիտեն, փրկարարական ծառայությունը:

Համաձայն Յանապետության Սահմանարության և օրենսդրական ակտերի, Լեռնային Ղարաբաղի Յանապետության Պատական համակարգը կազմված է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից, Վճռաբեկ դատարանից և Գերագույն դատարանից, ինչպես նաև օրենքով նախատեսված մասնագիտացված դատարաններից: Յանապետությունում արգելված է արտակարգ դատարանների ստեղծումը: ԼՂՅ-ի դատարաններն անկախ են: ԼՂՅ-ի դատավորներն անփոխարինելի են և իրենց պաշտոնը զբաղեցնում են մինչև 65 տարեկան լրանալը: Պատավորի իրավասությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Գերագույն դատարանը հանդիսանում է ԼՂՅ-ի բարձրագույն դատական մարմինը և կազմված է սահմանադրական և վճռաբեկ պալատներից: Այն իրականացնում է սահմանադրական արդարադատություն և իր իրավասությունների շրջաններում վերանայում է ստորադաս դատարանների անական ակտերը: Գերագույն դատարանը ապահովում է Սահմանադրության գերակայությունը և օրենքների կիրարկման միօրինակությունը: Գերագույն դատարանի նախագահը և մյուս դատավորները Յանապետության Նախագահի ներկայացմամբ նշանակվում են Ազգային ժողովի կողմից:

- Ժողովրդավարությունը և մարդու իրավունքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում

Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության համաձայն, պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով ու ազատություններով, որոնք հանդիսանում են անմիջականորեն գործող իրավունք: Հանրապետությունում ճանաչվում, ապահովվում և պաշտպանվում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Հանրապետության Սահմանադրության 22-րդ Գլուխը՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները», նախատեսում է մարդու և քաղաքացու անձնական, սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային իրավունքների ամբողջ համալիրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

Մարդու իրավունքների պաշտպանը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ընդունված Սահմանադրությունը ամրագրեց մարդու իրավունքների պաշտպանության ժողովրդավարական ինստիտուտը՝ ի դեմս Հանրապետության մարդու իրավունքների Պաշտպանի, որի ստեղծումը նախատեսված էր նաև ավելի վաղ ընդունված «Օմբուդսմենի մասին» օրենքում:

Մարդու իրավունքների Պաշտպանը հանդիսանում է անկախ պաշտոնատար անձ, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մարդու և քաղաքացու խախտված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Մարդու իրավունքների Պաշտպանի գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Մարդու իրավունքների Պաշտպանին վեց տարի ժամկետով նշանակում է Ազգային ժողովը՝ առնվազն պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-րդով: Մինևոչինչ անձը մարդու իրավունքների Պաշտպան չի կարող նշանակվել հաջորդաբար ավելի քան երկու անգամ:

Մարդու իրավունքների Պաշտպանն անփոխարինելի է: Մարդու իրավունքների Պաշտպանը օժտված է պատգամավորների համար սահմանված անձեռնմխելիությամբ: Նրա գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով:

Տեղական ինքնակառավարումը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը: Տեղական ինքնակառավարումը ԼՂՀ-ում իրականացվում է համաձայն 1998 թ. հունվարի 19-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի: Օրենքը պարունակում է ինքնակառավարում հասկացության բնորոշումը, դրա սկզբունքները, մարմիններն ու իրավասությունները, ինչպես նաև կորդինացումն ու տեղական ինքնակառավարման մարմինների ու պետական կառույցների միջև փոխգործունեությունը: Տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքի ավագանու խորհուրդը (որպես ներկայացուցչական մարմին), ինչպես նաև համայնքի ղեկավարը ընտրվում են համայնքի անդամների կողմից երեք տարի ժամկետով: ԼՂՀ-ում տեղական ինքնակառավարումն իրականացվում է քաղաքատարածքներում: Թաղապետարանն ունի սեփականության և գույքային այլ իրավունքներ: Թաղապետարանի սեփականության տնօրինման իրավասությունները ըստ թաղային նշանակության հարցերի լուծման, թաղապետարանն իրականացնում է որպես սեփական իրավասություն՝ իր պատասխանատվությամբ: Թաղապետարանի սեփականության իրավասությունների մի մասը օրենքով կարող է սահմանվել որպես պարտադիր: Պետական մարմինների իրավասությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք կարող են օրենքով փոխանցվել տեղական ինքնակառավարման մարմիններին:

ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրություններն անցկացվեցին 1998 թ. սեպտեմբերի 27-ին (այդ թվում նաև Հանրապետության մայրաքաղաքի քաղաքապետի): Տեղական ինքնակառավարման մարմինների հետագա ընտրություններն անց են կացվել 2001 թ. սեպտեմբերի 5-ին, 2004 թ. օգոստոսի 22-ին և 2007 թ. հոկտեմբերի 14-ին: Թաղապետարանների ղեկավարների վերջին ընտրություններն անց են կացվել 162 համայնքներում, իսկ ավագանիների խորհուրդների անդամների ընտրությունները (թաղային խորհուրդներ/

218 համայնքներում: Ընդհանուր առմամբ ընտրողների մասնակցությունը կազմել է 62,8 տոկոս:

Ժողովրդավարական այլ ինստիտուտները

- Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների Ընտրությունները, ինչպես նաև համարաբերական Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անց են կացվում համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիմունքների վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

2004 թ. դեկտեմբերին Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ընտրական օրենսգրքը»:

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում Օրենքի գերակայությունը ամրագրված է սահմանադրական մակարդակով: Հանրապետության Սահմանադրությունն ունի գերագույն իրավական ուժ, նրա նորմերը գործում են անմիջապես: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Ներպետական այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: Սահմանադրությանը հակասող օրենքները, ինչպես նաև այլ պետական իրավական ակտերը, որոնք ճանաչվում են որպես Սահմանադրությանը և օրենքներին հակասող, չունեն իրավաբանական ուժ:

- Ներպետական իրավական համակարգի համապատասխանումը միջազգային պարտավորությունների դրսևորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից ժողովրդավարացման, մարդու իրավունքների և միջազգային խաղաղության ու անվտանգության պաշտպանման միջազգային-իրավական նորմերի ընկալմանն ու ներդրմանը հավասարված լինելու մեջ:

Հանրապետության միջազգային պայմանագրերը հանդիսանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Օրենքներն ու իրավական այլ ակտերը պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին ու նորմերին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար միջազգային պայմանագրերը մտնում են ուժի մեջ միայն դրանց վավերացումից կամ հաստատումից հետո: Եթե վավերացված միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նրանք, որ սահմանված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրային

նորմերը: Հանրապետության Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել երկրի Ազգային ժողովի կողմից:

Իր ձևավորման պահից սկսած, Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը նախաձեռնել է միջազգային տարբեր կոնվենցիաներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միացման գործընթացը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը և Գերագույն խորհրդի նախագահությունը 1992 թ. նոյեմբերի 26-ին և 1994 թ. նոյեմբերի 23-ին համապատասխանաբար ընդունեցին Փառուբային երկրներին ու ժողովուրդներին անկախության տրամադրման 1960 թ. հռչակագրին, 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, 1966 թ. Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրին միանալու որոշումները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը և Գերագույն խորհրդի նախագահությունը 1993 թ. հունվարի 26-ին և 1995 թ. հունիսի 25-ին համապատասխանաբար ընդունեցին «1949 թ. ժնկ կոնվենցիային և 1977 թ. կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություններին միանալու մասին» որոշումները: Ներկայումս Հանրապետության Ազգային ժողովը աշխատանքներ է կատարում Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների, առաջին հերթին Մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների պաշտպանության 1950 թ. Եվրոպական կոնվենցիայի և այդ կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունների հնարավոր ստորագրման ու վավերացման քննարկումների շուրջ:

- Բազմակուսակցականությունը և ասարակական կազմակերպությունների ազատ գործունեությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում երաշխավորվում է Սահմանադրությամբ և Հանրապետության օրենսդրական ակտերով: Քաղաքական կուսակցությունները ձևավորում են ազատորեն, նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանն ու օրենքներին, իսկ գործունեության կարգը՝ ժողովրդավարության սկզբունքներին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում յուրաքանչյուր իրավունք ունի այլ անձանց հետ ստեղծել միավորումներ, այդ թվում նաև մասնագիտական միություններ և անդամակցել դրանց: Հանրապետությունում գրանցված են ավելի քան 100 հասարակական կազմակերպություններ:

- Ջանգվածային լրատվամիջոցների ազատությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում երաշխավորվում է սահմանադրական մակարդակով: Հանրապետությունում զրանցված են ավելի քան 20 զանգվածային տեղեկատվության միջոցներ, այդ թվում նաև «Արդարության ծայն» ռադիոկայանը, որը եթեր է դուրս գալիս արդրեջաներեն լեզվով: Համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի, 2003 թ. ստեղծվեց հասարակական հեռարձակման ընկերությունը:

- արտաքին քաղաքական գործունեության հիմունքները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացվում է միջազգային իրավունքի ճանաչված սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Հանրապետությունը վարում է սեփական արտաքին քաղաքականություն, հարաբերվում է այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ, իր պաշտոնական ներկայացուցիչներին գործուղում է միջազգային ու տարածաշրջանային կոնֆերանսների աշխատանքներին մասնակցելու:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին քաղաքական կուրսի անմիջական իրականացումն ապահովում է Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, որը ստեղծվել է 1993 թ. հուլիսին: Հանրապետությունը իր մշտական ներկայացուցչություններն ունի աշխարհի խոշոր պետություններում և տարածաշրջաններում. մշտական ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետությունում (նստավայրը՝ ք. Երևան), մշտական ներկայացուցչությունը Ռուսաստանի Ղաշնությունում (նստավայրը՝ ք. Մոսկվա), մշտական ներկայացուցչությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներում (նստավայրը՝ ք. Վաշինգտոն), մշտական ներկայացուցչությունը Ֆրանսիայում (նստավայրը՝ ք. Փարիզ), մշտական ներկայացուցչությունը Գերմանիայում (նստավայրը՝ ք. Բեռլին), մշտական ներկայացուցչությունը Ավստրալիայում (նստավայրը՝ ք. Սիդնեյ), մշտական ներկայացուցչությունը Մերձավոր Արևելքում (նստավայրը՝ ք. Բեյրութ):

Բացի քաղաքական գործառնությունների իրականացումը, մշտական ներկայացուցչությունները աջակցում են ԼՂՀ-ի տնտեսության մեջ ներդրումների ներգրավմանը, հայկական Սփյուռքի հետ կապերին, Լեռնային Ղարաբաղում մարդասիրական զորագրերի իրականացմանը:

Հյուպատոսական ծառայությունները պաշտպանում են Հանրապետության քաղաքացիների շահերը արտասահմանում:

ԼՂՀ-ի արտաքին գործերի նախարարության կենտրոնական ապարատը և Հանրապետության մշտական ներկայացուցչությունները արտասահմանում շարունակաբար ներկայացնում են Լեռնային Ղարաբաղի իրական պատկերը, որտեղ ժողովրդավարական արժեքները, մարդու իրավունքները առանցքային հասանցություններ են ԼՂՀ-ի որպես լիիրավ պետության կայացման ճանապարհին: Այս առումով ուշագրավ է Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատանքը խորհրդարանական և նախագահական ընտրություններում, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, մասնավորապես, դրանցում միջազգային դիտորդների ներկայության ապահովման գործում: Բացի այդ, ԱԳՆ-ն անմիջականորեն ներգրավված է Հանրապետությունում ժողովրդավարական օրենսդրական դաշտի ստեղծման գործընթացի մեջ:

Այդ ուղղությամբ գործունեության դրական արդյունքների մասին են վկայում մարդու իրավունքների հարցերով միջազգային տարբեր կազմակերպությունների Լեռնային Ղարաբաղի հարցով ներկայացված զեկուլյաները, ինչպես նաև միջազգային դիտորդների հաշվետվությունները:

ԼՂՀ-ի արտաքին գործերի նախարարությունը աջակցել է և շարունակում է աջակցել մեկ տասնյակից ավելի միջազգային կազմակերպությունների աշխատանքներին, որոնք հավատարմագրված են ԼՂՀ-ում: Ներկայումս նախարարությունն աշխատում է այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպես ԵԱՀԿ-ն, Կարմիր խաչի Միջազգային կոմիտեն, «HALO Trust» և միջազգային այլ կառավարական ու ոչ կառավարական կազմակերպություններ:

Աղրբեջանի Հանրապետության հետ հավանարտության երկարաժամկետ կարգավորման խնդրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին քաղաքական մոտեցումը, որն ունի կողմերի միջև հակամարտության համընդհանուր լուծման ձեռքբերման գաղի ներուժ, հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի որոշումը Հանրապետության ժողովրդի բացառիկ իրավունքն է, 2. կողմերի փոխադրած ճանաչումը, որը հանգեցնում է նախկին Աղրբեջանական ՍՄՁ-ի տարածքում երկու սուվերեն պետությունների խաղաղ համագոյակցմանը: Լեռնային Ղա-

րաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության հավասար միջազգային իրավական կարգավիճակը, 3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնումը և անկլավության բացառումը, 4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի՝ որպես Հանրապետության իշխանության սուվերենության կրողի և միակ աղբյուրի, անվտանգության միջազգային ու սեփական երաշխիքները, 5. տարածքային հարցերի և փախստականների ու հարկադիր վերաբնակեցվածների հետ կապված հարցերի լուծումը պետք է իրականացվի փոխադարձ հիմքերի վրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղ պայմանագրի շրջանակներում:

- բանակը և տարածաշրջանային անվտանգությունը

Սկսած 1992 թ. հունվարի 6-ին Հանրապետության Գերագույն հսորհրդի կողմից «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անվասխության հիմունքների մասին» օրենքի ընդունումից, սկսվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ձինված Ուժերի ձևավորման գործընթացը:

1992 թ. ապրիլի 20-ին, նշված օրենքին համապատասխան, Հանրապետության Կառավարությունը (Նախարարների խորհուրդը) ձևավորեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ինքնապաշտպանության խորհուրդը, որն ընդունեց ինքնապաշտպանության ուժերի ընդհանուր հրամանատարությունը: 1992 թ. հուլիսի 6-ին Հանրապետության Գերագույն հսորհուրդն ընդունեց «Ձինվորական ծառայության մասին» օրենքը:

1993 թ. նոյեմբերի 10-ին, Հանրապետության ինքնապաշտպանության բոլոր ջոկատները սուվերեն պետականությանը բնորոշ բանակային կառույցների վերակազմավորման նպատակով, այն ժամանակ իշխանության բարձրագույն գործադիր մարմնի իրավասություններով օժտված Հանրապետության Պաշտպանության պետական կոմիտեն որոշում կայացրեց ինքնապաշտպանության ուժերը վերակազմավորել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության Բանակի:

1995 թ. կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը:

2001 թ. հոկտեմբերի 31-ին Հանրապետության Ազգային ժողովը օրենք ընդունեց «Ձորակոչ և զորակոչի նախապատրաստման մասին»,

իսկ 2001 թ. դեկտեմբերի 27-ին՝ «Ձինվորական ծառայության մասին» օրենքի նոր խմբագրությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության Բանակի առջև Հանրապետության քաղաքական դեկլարության կողմից դրված ժամանակակից խնդիրների համապատասխան, երկրի Ձինված Ուժերն ունեն խիստ պաշտպանական բնույթ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ձինված Ուժերը ապահովում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանների անվտանգությունը, պաշտպանությունը, տարածքային ամբողջականությունը և ամենեմիխելիությունը:

Համաձայն ԼՂՀ-ի սահմանադրական նորմի, Հանրապետության Ձինված Ուժերը չեզոքություն են պահպանում քաղաքական հարցերում և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության Բանակը լավ վարժեցված է և հազեցված: Հանրապետության Ձինված Ուժերն իրենցից ներկայացնում են շարժունության ու մարտունակության օպերատիվ-մարտավարական ստանդարտների (ոչ միայն հավանական ագրեսորի կողմից անմիջական ռազմական սպառնալիքների, այլև ժամանակակից մարտահրավերների լայն դիապազոնի, մասնավորապես միջազգային ահաբեկչությունից բխող), նկատմամբ արագ արձագանքման ու ծավալման անտրաստանայնության համատեղման օրինակ: Հանրապետությունն ունի միջազգային ահաբեկչական խմբավորումների, վարձկանների դեմ պայքարի փորձ, որը ձեռք է բերվել Ադրբեջանի դեմ 1991-1994 թթ. ռազմական գործողությունների ընթացքում:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ձինված Ուժերի միջև գոյություն ունի ինտեգրման բարձր մակարդակ՝ քաղաքական բնույթի այնպիսի կարևորագույն փաստաթղթերի հիման վրա, ինչպիսիք են, օրինակ, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարությունը և Ռազմական դոկտրինը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառվածներ են տարվում մոտ ապագայում անվտանգության և պաշտպանության ապահովման նմանատիպ փաստաթղթերի ընդունման ուղղությամբ:

Ըստ արտասահմանյան ռազմական փորձագետների բազմիցս ներկայացված գնահատականների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ձինված Ուժերը՝ ֆինանսավորման, ռազմական տեխնիկայի

թվաքանակի առումով գիշերով Ադրբեջանի Հանրապետության բանակին, նրան գերազանցում են իրենց մարտունակությամբ: Հանրապետության Պաշտպանության Բանակը համալրված է մարտական զործողությունների փորձ ունեցող սպաներով: Ազրեխայի հետ մղված համար զինապարտների զորակոչի մակարդակը կարող է հասնել 100 տոկոսանոց ցուցանիշի:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ստիպված է ունենալ համեմատաբար խոշոր զինված ուժեր՝ հաշվի առնելով Ադրբեջանի Հանրապետության բարձրագույն քաղաքական ու ռազմական ղեկավարության կողմից հնչող սպառնալիքները ռազմական ռեվանշի մասին, Ադրբեջանի կողմից սեփական ռազմական բյուջեի ֆինանսավորման աճը՝ հարծակողական տիպի ռազմական տեխնիկայի ձեռքբերման հստակ թեքումով, ընդ որում, որոնք ունեն գանգվածային ոչնչացման զենքի և ոչ ընտրովի հարվածի մակարդակին մոտ պարամետրեր (օրինակ, Ուկրաինայից մատակարարվող «Սմերչ» ԶԿԶԶ-ներ):

Ղարաբաղյան հակամարտության գոտում զինադադարի մասին համաձայնագրի ստորագրման պահից բանակաշինությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանգեցրեց տարածաշրջանում առավել մարտունակ Բանակի ստեղծմանը, որն անփոխարինելի տարր դարձավ տարածաշրջանային ուժերի հավասարակշռության մեջ, ինչն ուղղված է Հարավային Կովկասում խաղաղության ու անվտանգության պաշտպանությանը: Նշված հավասարակշռությունը խախտելու ցանկացած փորձ, մասնավորապես, ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ձիմված Ուժերի կողմից վերահսկվող նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքներից զորամասերի միակողմանի դուրս բերումը՝ առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից ուղիղ, երկկողմանի ու նախնական պաշտպանական, իրավաբանորեն պարտավորեցնող պայմանավորվածությունների ձեռքբերման՝ Ադրբեջանի Հանրապետության կողմից հակամարտության գոտում ուժի և սպառնալիքների չլիարձան մասին, անխուսափելիորեն կհանգեցնեն հակամարտության գոտում մոր ռազմական էակալացիայի՝ տարածաշրջանի համար անկանխատեսելի ռազմա-քաղաքական, հումանիտար և այլ հետևանքներով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու Ադրբեջանի Հանրապետության միջև երկկողմանի շփումների ներկայիս փուլում, օգտակար է հակամարտության գոտում ուժերի ռազմա-քաղաքական հավա-

սարակշռության նկատմամբ հսկողության ու վստահության կոնկրետ միջոցների ձևակերպման ու իրականացման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու Ադրբեջանի Հանրապետության միջև հակամարտության դադարեցման մասին հավանական համաձայնագրի շուրջ երկխոսությունը:

-տնտեսությունը

Չնայած բազմաթիվ տնտեսական դժվարություններին, որոնք կապված են միջգաղափարի հանրության կողմից ԼՂՀ անկախությունը չճանաչելու հետ, հանրապետության տնտեսությունը արագ տեմպերով զարգանում է, բարելավվում են սոցիալական ցուցանիշները: Սոցիալ-տնտեսական զարգացման հաջողությունները պայմանավորված են ներքին քաղաքական կայունությամբ, վերջին տարիներին իրականացվող բարեփոխող կառուցվածքային ու ինստիտուցիոնալ բարեփոխումներով: Հարկ է նշել, որ ԼՂՀ-ն գործնականում սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում հաղթահարել է պատերազմի կործանարար հետևանքները՝ արդյունավետ կերպով վերականգնելով ու զարգացնելով ինչպես Ղարաբաղի տնտեսության համար ավանդական ագրարային սեկտորը, այնպես էլ հեռակարային՝ Լեռնամետալուրգիական արդյունաբերությունը, ինովացիոն տեխնոլոգիաները, զբոսաշրջությունը և այլն:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը վերջին տարիներին ապահովում է սոցիալ-տնտեսական զարգացման բարձր դինամիկա: 2001-2006 թթ. Վերքին համախառն արտադրանքի աճի միջին տարեկան տեմպերը կազմել են 11-13 տոկոս (ինֆլյացիայի շուրջ 3 տոկոս միջին տարեկան տեմպերի պայմաններում): 2007 թ. արդյունքներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ՀՆԱ-ն կազմել է շուրջ 71 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա համեմատաբար ավելանալով 8,8 տոկոսով: ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորի 5,1 տոկոսի մակարդակի պայմաններում: Հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող հաշվարկով 2007 թ. ՀՆԱ-ն կազմել է 510 հազ. դրամ (1489,5 ԱՄՆ դոլար), այն ղեկավարում էր 2006 թ. տվյալ ցուցանիշը կազմել է 449,4 հազ. դրամ կամ 1080,5 ԱՄՆ դոլար: Առանց հարկերի ՀՆԱ-ի աճը կազմել է 6,4 տոկոս: Սննդամթերքի արտադրության ոլորտը աճել է 3,9 տոկոսով, այդ թվում արդյունաբերությունը՝ 5,8 տոկոս, գյուղատնտեսությունը՝ 5,4 տոկոս: 2007 թ. ՀՆԱ-ի գերակշռող մասը՝ 63,5 տոկոսը, ստեղծվել է մասնավոր

սեկտորում (2006 թ.՝ 65,3 տոկոսը): ՀՆԱ-ի շուրջ 32 տոկոսն ընկնում է փոքր և միջին ձեռնարկությունների վրա (2006 թ.՝ 25,2 տոկոսը): 2008 թ. սպասվում է 13,8 տոկոսանոց տնտեսական աճ: Դրանով իսկ, 2003 թ. ՀՆԱ-ի մեկարդակը կավելանա 2,5 անգամ:

Տնտեսական աճի բարձր տեմպերի պայմաններում, աճել են բնակչության դրամային եկամուտները, որոշակի դրական փոփոխությունների է ենթարկվել նաև ՀՆԱ-ի կառուցվածքը: Զարգանում են տնտեսության բոլոր սեկտորները. արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, առևտուրը, ֆինանսները և ծառայության մյուս ոլորտները:

Միայն 2008 թ. հունվար-հուլիս ամիսների ընթացքում Լեռնային Ղարաբաղում փաստացի գներով արտադրված է 13847,2 մլն. դրամի (45 մլն. ԱՄՆ դոլար) արդյունաբերական արտադրանք: Համաձայն ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2007 թ. միևնույն ժամանակահատվածի համեմատությամբ արդյունաբերական արտադրության ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 105,1 տոկոս: Արդյունաբերական արտադրության կառուցվածքում պետական և ոչ պետական սեկտորների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է 21,4 տոկոս և 78,6 տոկոս (2007 թ. նույն ժամանակահատվածում՝ համապատասխանաբար 19,7 տոկոս և 80,3 տոկոս): Ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսներին հանրապետությունում իրացվել է 1372,3 տոննա ընտանի կենդանիների և թռչնի միս, որը կազմում է նախորդ տարվա միևնույն ցուցանիշի 83,7 տոկոսը: Արտադրվել է 18880,8 տոննա կաթ (100,3 տոկոս), 11171,3 հազ. ձու (132,8 տոկոս): Ընթացիկ տարվա 7 ամիսների ընթացքում հանրապետությունում իրականացվել են 10323,6 մլն. դրամ գումարի շինարարական աշխատանքներ, ինչը 2007 թ. միևնույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 100,1 տոկոս:

Հատուկ ուշադրություն է դարձվում արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանը:

Էլեկտրաէներգետիկայի զարգացման երկարաժամկետ ծրագրի համաձայն, ԼՂՀ-ի կառավարությունը մտադիր է աճուրդի դնել երկրի միակ Սարսանգի հիդրոէլեկտրակայանը (ՀԷԿ): Միևնույն ժամանակ պլանավորվում է կառուցել 24-25 փոքր ՀԷԿ-եր: Դրանցից հինգը նախատեսվում է կառուցել առաջին փուլում (3-ը կառուցվելու են Թրգե գետի վրա, 2-ը՝ Թառթառի վրա): Դրա շնորհիվ մոտակա երեք տարիներ

րի ընթացքում Ղարաբաղի էլեկտրաէներգիայի պահանջարկը կծածվի 90 տոկոսով, իսկ երկրորդ փուլում արդեն կարելի կլինի արտահանել էլեկտրաէներգիա: Ներկայումս Ղարաբաղն ապահովվում է էլեկտրաէներգիայի սեփական ծախսերի միայն 45 տոկոսը, իսկ մնացածը ներկրվում է Հայաստանից:

Դրմբոնի պղնձահարստացման կոմբինատը («Քեյզ Մեթլս») հանդիսանում է ԼՂՀ-ի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունը: Դրմբոնի կոմբինատը նախագծվել էր տարեկան 150 հազ. տոննա հանքանյութի արդյունահանման ու վերամշակման համար: Վերջին չորս տարիների ընթացքում ձեռք է բերվել նախատեսվածից երկու անգամ գերազանցող արդյունք: 2007թ. արդյունահանվել և վերամշակվել է 320 հազ. տոննա հանքանյութ, իսկ 2008թ. կոմբինատը թարմացրել ու համալրել է տեխնիկական հագեցվածությունը: 2008 թերված լրացուցիչ սարքավորումը հնարավորություն կտա արտադրության ծավալը հասցնել մինչև տարեկան 400 հազ. տոննայի: Իրականացվել են բազմաթիվ հետախուզական աշխատանքներ, որպեսզի 10 տարի անց այս տարիների ընթացքում ստեղծված բոլոր ենթակառուցվածքները աշխատեն նպատականվճառ: Կոմբինատում արտադրվող խտանյութը արտահանվում է Ալավերդու պղնձա-մոլիբդենային գործարան, որտեղ ենթարկվում է մետալուրգիական վերամշակման, որից հետո արտադրանքը՝ ոսկի պարունակող պղինձը, արտահանվում է եվրոպական շուկա: Դրմբոնի կոմբինատում աշխատում են 1200 մարդ, և ձեռնարկությունը նպաստում է հանրապետությունում աշխատատեղերի հիմնախնդիրների լուծմանը:

ԼՂՀ-ում բավական զարգացած է օդու-գինու արդյունաբերությունը: Խաղողագործությունը և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակումը, առաջին հերթին՝ հիդեգործական (գինու, գինու հումքի, կոնյակի սպիրտի ստացումը) տնտեսության զարգացման գերակա ուղղություններից են: Նախորդ դարի 80-ական թվականներին վերջին խաղողի արտադրության ծավալներն արդեն հասնում էին մինչև 180 հազ. տոննայի:

2008թ. գործարկվեց բանջարեղենի և պտղի վերամշակման ժամանակակից ձեռնարկություն, որի արտադրական հզորությունները հնավորություն են տալիս ոչ միայն ընդունել ու վերամշակել գործնականում այսօր հանրապետությունում արտադրվող բանջարեղենի և պտուղների ամբողջ բերքը, այլ նաև ստեղծել մինչև 300 աշխատատեղ: Զեռնարկությունը հագեցված է ժամանակակից արտասահմանյան սար-

քավորումներով. «Արցախֆրոնտ» ապրանքանիշի տակ թողարկվող է-կոլոգիապես մաքուր արտադրանքի նկատմամբ պահանջարկը օրեցօր աճում է: Այժմ ձեռնարկությունն օրական արտադրում է շուրջ 8 տոննա արտադրանք (պահածոներ), սակայն աշխատակիցների անհրաժեշտ քանակի հավաքագրման պարագայում արտադրությունը կավելանա մինչև 40 տոննա և ավելի:

ԼՂՀ-ի արդյունաբերական արտահանման հիմնական հողվածներն են ոսկու և պղնձի խտանյութերը, օդու և գինու արտադրանքը, պահածոները, գորգերը և այլն: Լեռնային Ղարաբաղը հարուստ է օգտակար հանածոներով և բուժիչ ջրերով: Հայտնի են ոսկու, արծաթի, գունավոր մետաղների, երկաթի, ցինկի, պիրիտի, գրանիտի, մարմարի, իլամադալան 2 շպտի, կիսաթանկարժեք քարերի, կրաքարի, հրակայուն կավի, լեռնային բյուրեղապակու հանքավայրերը: Սեփական հանքային-հումքային ռեսուրսների համալիր օգտագործումը Ղարաբաղին հնարավորություն կտա արտադրանքի մի շարք տեսակներով դուրս գալ համաշխարհային շուկա:

ԼՂՀ կառավարությունը գյուղատնտեսության 2009-2012 թթ. զարգացման ծրագիր է մշակել, որն ընդգրկում է գյուղատնտեսության ռազմավարական զարգացումը, հացաբույսերի բերքատվության բարձրացումը և Բանագուրի ենթաշրջանի զարգացումը: Այսպես, օրինակ, մինչ օրս ԼՂՀ-ը ստանում էր 10-15 ց/հա բերք, 2008 թ. այդ ցուցանիշն աճեց մինչև 21 ց/հա: Համաձայն մշակված ծրագրի այս ցուցանիշը առնվազն կկազմի 25 ց/հա: 2008 թ. ԼՂՀ-ում ստացվել է 1 մթեղվել է 76 տ. ցորեն, ինչը համապատասխանում է 21 ց/հա ցուցանիշին: ԼՂՀ-ում կան նաև բոլոր հնարավորությունները խոշոր և մանր եղջերավոր ցեղային անասունների զարգացման համար: Այս կապակցությամբ Կառավարությունը որոշում է ընդունել Լեռնային Ղարաբաղի անասնապահության զարգացման նպատակով ստեղծել 8եղային անասնապահության կենտրոն: Երկարամյա ԼՂՀ-ի տնտեսության ազդարանի սեկտորը տալիս է Հանրապետության ՀՆԱ-ի ավելի քան 15,7 տոկոսը:

Լեռնային Ղարաբաղը՝ իր հնագույն պատմությամբ, մշակույթով, պատմական ու ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններով, շքեղ բնությանը, կիրճերով, լեռներով, ալպիական մարգագետիններով, մեղմ բնակլիմայական պայմաններով և մաքուր էկոլոգիայով հսկայական հետաքրքրություն է ներկայացնում զբոսաշրջության զարգացման տեսակետից: Վերջին տարիներին կառուցվել են մեկ տասնյակի հաս-

նող, ծառայությունների բարձր մակարդակով ժամանակակից հյուրանոցներ, ստեղծվել բջջային կապի հեռախոսային ցանց՝ միջազգային ցանց դուրս գալու հնարավորություններով: Բոլորովին վերջես «Արլայկ» ՍՊԸ-ն Շուշի քաղաքում Ղազանչեցոց եկեղեցու հարևանությամբ (Ղազանչեցոց փողոցի վրա) սկսել է զբոսաշրջային համալիրի շինարարությունը: Համալիրի ընդհանուր մակերեսը կկազմի 750 ք.մ., իսկ նրա կազմի մեջ կմտնեն հյուրանոցը, ռեստորանը, ինչպես նաև զբոսաշրջիկների հարմարավետ հանգստի համար նախատեսված տարածքները: Համալիրի ամբողջ մակերեսի միայն 350 ք.մ.-ի վրա կկառուցվեն շենքեր, իսկ մնացած մասը կբարեկարգվի և կստեղծվեն զբոսանքի ու տարբեր զվարճանքների վայրեր:

Վերջին տարիներին զգալիորեն ամրապնդվել է հանրապետության ֆինանսական վիճակը: Պետական բյուջեի եկամուտների տարեկան աճը կազմում է ավելի քան 40 տոկոս: 2008 թ. երկրի միասնական բյուջեի եկամուտները կկազմեն 50329,5 մլն. դրամ, ծախսերը՝ 53761,4 մլն. դրամ, իսկ դեֆիցիտը՝ 3431,6 մլն. դրամ: ԼՂՀ-ի բյուջեն լրացվում է Հայաստանից ստացված միջպետական վարկի հաշվին: Սակայն դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ Ղարաբաղի և Հայաստանի տնտեսությունները ինտեգրված են միասնական տնտեսական տարածության շրջանակներում. միասնական բանկային համակարգ և միասնական դրամավարկային քաղաքականություն: Բացի այդ, երկու պետությունները գործում են միասնական մաքսային տարածքի շրջանակներում, իսկ ղարաբաղյան ներկումից և արտահանումից ստացված եկամուտները ուղղակիորեն չեն մտնում հանրապետության բյուջե: Հարկ է նշել, որ ԼՂՀ-ի բյուջեի ընդհանուր մուտքերի մեջ միջպետական վարկի տեսակարար կշիռը աստիճանաբար կրճատվում է սեփական եկամուտների դիմանիվ աճի հաշվին: ԼՂՀ-ի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի համաձայն կանխատեսվում է, որ 2009-2011 թթ. հանրապետության պետությունների սեփական եկամուտները համապատասխանաբար կկազմեն 22 մլրդ. դրամ, 26 մլրդ. դրամ, 30,9 մլրդ. դրամ:

ԼՂՀ-ն ունի կայուն բանկային համակարգ: Վերջին տարիներին Լեռնային Ղարաբաղում բացվել են Հայաստանի բանկերի նոր մասնաճյուղեր, որոնք ընդլայնում են իրենց ծառայությունների սպեկտրը: Զգալիորեն ընդլայնվել են նաև բանկերի կողմից մատր և միջին բիզնեսի ֆինանսավորման մասշտաբները, հասողությամբ զարգանում է հի-

պորթեկային շուկան: Հանրապետության բանկային համակարգի զարգացումը բարենպաստ պայմաններ է ստեղծում ԼՂՀ-ում ավելի մասշտաբային տնտեսական ծրագրերի իրականացման համար:

Չնայած արտաքին ներդրումների ներգրավման զգալի դժվարություններին, Լեռնային Ղարաբաղն ունի բոլոր նախադրյալները բարեհաջող ներդրումների համար: Թեև կապիտալ ներդրումները հիմնականում կատարվում են աշխարհի տարբեր երկրների հայկական Սփյուռքի ներկայացուցիչները, սակայն կան նաև այլազգի ներդրողներ: Լեռնային Ղարաբաղի ներդրումային քաղաքականության հայեցակարգն ուղղված է հանրապետության մրցակցային առավելությունների որոշմանը, ներդրումների անիրաժեշտ ծավալների ապահովմանը և դրանց հիման վրա՝ տնտեսության զարգացմանը: Մասնավոր ներդրումների ներգրավման համար հանրապետությունում ստեղծված է բարենպաստ ներդրումային մթնոլորտ, մասնավորապես, գործում է ազատական հարկային օրենսդրություն, տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցման պարզագույն մեխանիզմ (1 օրվա ընթացքում), օրենսդրորեն երաշխավորվում է ներդրողի իրավունքների պաշտպանությունը, առկա է էժան աշխատանքի և որակյալ կադրերի շուկա: Ներդրումների ներգրավման համար գերակա ոլորտներ են հանդիսանում հիդրոէներգետիկան, խաղողագործությունը, գյուղատնտեսական հումքի վերամշակումը, բնական ռեսուրսների յուրացումը (ջրային, անտառային, հողային, հանքային) և ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացումը, զբոսաշրջությունը և խմբ.: 2007 թ. տվյալներով Լեռնային Ղարաբաղի բնակչության մեկ շնչին ընկնող հաշվարկով ներդրումները կազմել են 210 դոլար, իսկ 2008 թ. գերազանցել են 250 դոլարը: Սակայն, ԼՂՀ-ի կառավարությունը գտնվում է որ դա շատ ցածր ցուցանիշ է, որը պետք է մպատակադրված քայլերով կտրուկ բարձրացվի: Արտասահմանյան մասնավոր ներդրումները, որոնք ԼՂՀ-ի տնտեսության տարբեր ոլորտների մեջ կազմում են ավելի քան 100 մլն. ԱՄՆ դոլար:

Վերոնշյալ դրական արդյունքները վկայում են, որ Լեռնային Ղարաբաղը մուտք է գործել զարգացման որակապես նոր փուլ՝ ԼՂՀ-ի տնտեսության կայուն աճի և քաղաքացիների բարեկեցության բարձրացման փուլ: Այսօր առաջնահերթ խնդիր է նշված դրական միտումների ամրագրումն ու զարգացումը:

2007 թ. հոկտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի հերթական պլենար նիստի ժամանակ միաձայն հավանության ար-

ժամացավ ԼՂՀ-ի նոր կառավարության գործունեության 5-ամյա ծրագիրը: Փաստաթղթում ընդգրկված են Լեռնային Ղարաբաղի նախագահի հիմնական նախընտրական կետերը և երկրի առաջատար քաղաքական ուժերի մի շարք ծրագրային կետերը: Հետագա 5 տարիների ընթացքում նախատեսվում է ԼՂՀ-ի ՀՆԱ-ի տարեկան 14-15 տոկոսի աճ, հանրապետության մեջ ներդրումների տարեկան 30 տոկոսի աճ: համաձայն տվյալ ծրագրի, 2008 թ. հունվարի 1-ից թոշակներն ավելացվեցին 60 տոկոսով, իսկ մինչև 2013 թ. այն կավելանա 2,5 անգամ:

Կառավարության ծրագրում մեծ ուշադրություն է հատկացված սոցիալական ոլորտին: Ընդ որում էական փոփոխություններ են նախատեսվում, մասնավորապես, հանրապետության բնակչության անապահով խավերին և պատերազմում զոհվածների հարազատներին աջակցության ցուցաբերման, ինչպես նաև երիտասարդ ընտանիքների ամրացման հարցերում: ԼՂՀ-ի կառավարությունը վճռական քայլեր կծեռնարկի ծնելիության խթանման, բնակչության ակտիվացման, բնակարանային շինարարության ծավալների մեծացման, ջրամատակարարման ապահովման և բուժօնաշարության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Կառավարությունը նպատակադրված պայքար է մղելու կաշառակարության դեմ և հարթահարվելու է սովետային տնտեսությունը: Լուրջ բարեփոխումներ են նախատեսված գյուղատնտեսության ոլորտում: Նոր կառավարության գործունեության ծրագրում նշված են նաև հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի բարելավման, բյուջեային միջոցների արդյունավետ օգտագործման, նոր սոցիալական ծրագրերի մշակման և Արցախի ու Սփյուռքի միջև համագործակցության խորացման հստակ ծրագրեր:

ԼՂՀ մուտք է գործում միջազգային կառույցների ուղիղ ֆինանսական օգնությունը, ինչը բացասակարգ են անդրադառնում Հանրապետությունում տնտեսական ու սոցիալական վիճակի վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ֆինանսական օգնություն մուտք է գործում ժողովրդավարական արժեքներով և աշխարհագրական դիրքով իրեն մոտ կանգնած այնպիսի հարևանից և միջազգային ասպարեզում այնպիսի ամենաազդեցիկ դերակատարից, ինչպիսին ներկայումս հանդես է գալիս Եվրոպական Միությունը:

Կոստվոյի նոր պետականության սոցիալ-տնտեսական զարգացման համար Եվրոպական Միության կողմից 122,7 մլն. եվրոյի տրամադրման հետ կապված վերջին իրադարձությունները Լեռնային Ղա-

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.....	3
Պետականության կայացումը դարերի սահմանագծում.....	3
Ընդհանուր տվյալներ	3
Պատմությունը	4
Ղարաբայան շարժման ժամանակակից փուլի սկիզբը.....	11
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը	14
Հանրապետության անկախության իրավական հիմքերը.....	14
1991-1994 թվականների ռազմական գործողությունները	17
1992 թվական	18
1993 թվական	24
1994 թվական	28
Հետպատերազմական ժամանակաշրջան.....	30
- հումանիտար հետևանքները	30
- ղարաբայան հակամարտության կարգավորման գործընթացի հիմնական փուլերը	36
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետականության կառուցումը.....	44
- պետական իշխանության մարմինների կայացումը	44
Օրենսդիր իշխանությունը	45
Գործադիր իշխանություն	46
Ղատական իշխանությունը	50
- պետական իշխանության համակարգը.....	50
- ժողովրդավարությունը և մարդու իրավունքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում	54
Մարդու իրավունքների պաշտպանը	54
Տեղական ինքնակառավարումը	55
Ժողովրդավարական այլ ինստիտուտները	56
- արտաքին քաղաքական գործունեության հիմունքները.....	58
- բանակը և տարածաշրջանային անվտանգությունը	60
- տնտեսությունը	63

րաբաղի Հանրապետությանը հիմք են տալիս հուսալ, որ Եվրոպական Միության դիրքորոշումը կփոխվի Հանրապետությանը ֆինանսական և այլ տնտեսական օգնության տրամադրման հարցում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասն սպասումներն առավել ևս հիմնավորված են հաշվի առնելով այն, որ 2008 թ. հոկտեմբերի Կոսովոյին տրամադրված օգնությունն իրականացվել է Անդամակցելու նախապատրաստման համար օգնության գործիքի 2008 թ. ամենամյա Եվրոպական Հանձնաժողովի ծրագրի շրջանակներում (European Commission Instrument for Pre-Accession, IPA), որի ընդունումը, ինչպես որոշվել է Եվրոպական Միության կողմից, չի կանխորոշում Եվրոպական Միության յուրաքանչյուր անդամ-երկրի դիրքորոշումը Կոսովոյի կարգավիճակի նկատմամբ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը ցուցաբերված ուղիղ ֆինանսական օգնությունը զգալիորեն նպաստել է Լեռնային Ղարաբաղի պատերազմով քայքայված տնտեսության վերականգնմանը: 1998 թ. ԱՄՆ Կոնգրեսի որոշմամբ Միացյալ Նահանգները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը ցուցաբերում են անմիջական հումանիտար ֆինանսական օգնություն, որն ուղղվում է պատերազմի հետևանքների վերացմանը, Հանրապետության հումանիտար կարիքների բավարարմանը: 2008 թ. տվյալ օգնությունը կազմել է 3 մլն. դոլար: 2009 ֆինանսական տարում ԱՄՆ-ն նախատեսում է Հանրապետությանը առանձնացնել 8 մլն. դոլար:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պետականության կայացումը դարերի սահմանագծում



«Անտարես» հրատարակչատուն
Երևան-0009, Սաշտոոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am